ՀՀ կառավարությունը երկարաձգել է հանրապետությունում 2020թ. մարտի 16-ին հայտարարված եւ մինչեւ մայիսի 14-ը երկարաձգված արտակարգ դրության ժամկետը 2020թ. մայիսի 14-ից՝ 30 օրով՝ մինչեւ 2020թ. հունիսի 13-ը:

Շաբաթաթերթ
20 մայիսի 2020թ.
№ 11 (527)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆԻՔՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

Բաժնետերերի նոր փոփոխություններ Ձանգեզուրի պղնձամոլիբդենայինում. «Քրոնիմետ»-ը սեփականատերերի ցանկում այլեւս չկա

Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում (ՁՊՄԿ) 75 տոկոս մասնակցություն ունեցող գերմանական «Քրոնիմետ» ընկերությունների խումբը որեւէ կերպ ընկերության իրական սեփականատերերի ցանկում չի արտացոլվում: Ըստ ամենայնի՝ գերմանական ընկերությունը դադարել է լինել ՁՊՄԿ բաժնետեր: Սա պարզ է դառնում ՁՊՄԿ-ի՝ իրական սեփականատերերի հայտարարագրի ուսումնասիրությունից:

Հայաստանի կառավարությունը Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության շրջանակում պարտավորվել էր հրապարակել հանքարդյունաբերական ընկերությունների իրական սեփականատերերի ռեեստրը: Այն արդեն հրապարակվել է, եւ Սիվիլնեթն ուսումնասիրել է Հայաստանի ամենախոշոր ընկերության՝ Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի իրական սեփականատերերի մասին տվյալները:

ՍիվիլՆեթն անցյալ տարվա նոյեմբերի 1-ին հրապարակել էր հետաքննություն՝ ՁՊՄԿ-ում բաժնեմասերի փոփոխությունների վերաբերյալ: Ըստ հրապարակման՝ 75 տոկոս բաժնեմասը պատկանում էր գերմանական «Քրոնիմետ» ընկերությունների խմբին:

Տես նաեւ՝ Ձանգեզուրի պղնձամոլիբդենային. Մաքսիմ Հակոբյանի ու նրա որդու փոխարեն նոր բաժնետերեր ժնեւից եւ Աջափնյակից:

Ըստ ձեռք բերված տվյալների՝ Վատիկանում ՀՀ նախկին դեսպան Միքայել Մինասյանի շրջապատի անձինք ՁՊՄԿ-ում տնօրինել էին ընկերության բաժնետոմսերի 12,5 տոկոսը, որը հետագայում անցել էր Walnort Finance Limited ընկերությանը, որն իր հերթին Կիպրոսում գրանցված էր նույն հասցեում, ուր նաեւ ԱԱԾ նախկին տնօրեն Արթուր Վանեցյանի հորեղբոր որդիներին պատկանող Triendotto investment ընկերությունն էր գրանցված:

Մյուս 12,5 տոկոս բաժեմասի սեփականատերը «Սթար դասթ» ընկերությունն էր, որը կապվում էր ՁՊՄԿ գլխավոր տնօրեն Մհեր Պոլոսկովի, նրա տեղակալ Նարեկ Ամբարյանի, ՁՊՄԿ խորհրդի անդամ, Սյունիքի նախկին մարզպետ Վահե Հակոբյանի եղբոր՝ Կարեն Հակոբյանի հետ: «Սթար դասթ»-ի հետ կապված ՍիվիլՆեթի տրամադրության տակ էր հայտնվել մի փաստաթուղթ, ըստ որի՝ ընկերության բաժնետերերից է եղել նաեւ Սիլվա Դարչինյանը, որը Միքայել Մինասյանի հետ կապվող ձեռնարկության աշխատակից էր:

Ինչ կա նոր հայտարարագրում

ՁՊՄԿ-ի իրական սեփականատերերի հայտարարագրում զարմանալիորեն չենք հանդիպում ոչ ընկերությունում առյուծի բաժին տնօրինող «Քրոնիմետ»-ի, ոչ էլ «Քրոնիմետ»-ի սեփականատեր Պիլարսկիների անվանը: Նույնիսկ միջանկյալ կազմակերպությունների ցանկում «Քրոնիմետ»-ը բացակայում է: 2019-ին կոմբինատը ներկայացրել է ընկերության բաժնետիրական կառուցվածքը, որում գերմանական ընկերությունն անուղղակիորեն տնօրինում էր կոմբինատի 75 տոկոսը՝ Գյունտեր, Յուրգեն, Էլկե, Յոակիմ Պիլարսկիների մասնակցությամբ: Իրական սեփականատերերի նոր ցանկում Պիլարսկիներից որեւէ մեկի անունը չկա: «Քրոնիմետ»-ի խմբի ընկերություններին եւս չենք հանդիպում:

Ովքեր են ՁՊՄԿ նոր բաժնետերերը

Կառավարության հաստատած ու կոմբինատի ներկայացրած հայտարարագրով ՁՊՄԿ իրական սեփականատեր-ֆիզիկա-

Շարունակությունը՝ էջ 3

Պոլոսկով Մհերը խորացնում է Քաջարանի իրական սեփականատերերի առեղծվածը, իսկ Սյունիքը սպասում է վարչապետ Նիկոլ Փաշինյանի պարզաբանմանը

«Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության ունեցվածքի վերաբաշխման համար պատերազմը, որ մեկնարկել է 2014-ին, նոր դրսեւորումներ է ունենում մեր օրերում...

Քաջարանի սեփականատերերին սպասարկող մայրաքաղաքային մամուլը 2020 թ. մայիսի 15-ին հրապարակել է «Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ տնօրեն Մհեր Պոլոսկովի հետ հարցազրույցը՝ *«Հայաստանը հնարավորություն ունի դառնալու երրորդ երկրներում հանքավայրեր շահագործող խոշոր ընկերությունների կենտրոն»* վերտառությամբ:

Այդ հարցազրույցը եւս մեկ վկայություն է այն ամենի, թե ինչ անողոք մարտեր են մղվում կոմբինատի բաժնետոմսերի հերթական վերաբաշխման համար:

Շարունակությունը՝ էջ 2

Շները

Բարձրահարկերի պատշգամբներից
Ուրիշ տեսակի շներ են հաչում ...
Այդ շներն ուրիշ տեսակ են աճում,
Ուրիշ տեսակ են հաչում: Բախտավոր
Աստղի տակ ծնված շներ են դրանք:
Ոչ ցավն են տեսել Բողար նախահոր,
Ոչ բուք են տեսել, ոչ բախտի
հեգնանք:
Ոչ խնայել են գույքը տնային,
Ոչ պահպանել են մաքրությունը տան,
Ոչ էլ օրենքն են սերտել՝ շնային
Նախնական լեզվի շարահյուսության:
Ծնվել են անհոգ, անհոգ մեծացել.
Ոչ իրենց բախտի գինն են իմացել,
Ոչ էլ իմաստը իրենց «հաֆ-հաֆի»:
Թե Բողար պապը գտներ մի հնար,
Հավիտենական քնից արթնանար,
Նրանց հաչոցից գլուխ չէր հանի:
Հաչում են՝ կարծես գորտ է կռկռում:
Բայց ի՞նչ արած, շան կոչում են կրում,
Եւ պիտի հաչեն, ըստ կոչման
պարտքի,
Շների վրա փողոց ու բակի...
Եւ չեն հարցնում ժամանակ ու ժամ,
Հաչում են նրանք: Եւ մինչեւ անգամ
Ծիծեռնակների վրա են հաչում,
Խելոք, տնարար ծիծեռնակների,
Որ շենքերից շենք շեղակի թռչում,
Կերն են վաստակում իրենց ձագերի:
Բայց ծիծեռնակը ծիծեռնակ է միշտ...
Ծիծեռնակները թռնում են գնում
Եւ այդ շներին շան տեղ չեն դնում:

Համո Սահյան

Ի՞նչ կապ է ունեցել Արթուր Վանեցյանը Քաջարան ներխուժած հրոսակախմբի հետ եւ արդյո՞ք աջակցել է հայտնի մարզպետի սյունիքյան կամայականություններին

Դեռեւս մի քանի օր առաջ ԱԱԾ նախկին տնօրեն Արթուր Վանեցյանը հայտարարել էր՝ «...Հորս պատկանող բեռնափոխադրող ընկերությունը ՁՊՄԿ-ի հետ սկսել է աշխատել 2014-ից»:

2020 թ. մայիսի 1-ին, սակայն, նոր բացահայտումներ եղան այդ ուղղությամբ:

1in.am կայքը հրապարակեց հոդված՝ *«Վանեցյանը ՁՊՄԿ-ի բեռների խոշոր փոխադրող ընկերությունը հիմնել է Մհեր Սեդրակյանի որդու հետ համատեղ. նոր մանրամասներ»:*

Հոդվածում մասնավորապես նշված է. «ՁՊՄԿ-ի հետ աշխատող բեռնափոխադրման ընկերությունը միայն Վանեցյանի հորը չի պատկանել: Տարիներ առաջ Վանեցյանը եւ Մհեր Սեդրակյանի՝ Թոխմախի Մհերի որդին են համատեղ ձեռնարկել լոգիստիկ բիզնեսը, որի միջոցով Քաջարանից տեղափոխում են Քաջարանի պղնձամոլիբդենային ընկերությունից հումքը համապատասխան նշանակման վայրեր: Պարզից էլ պարզ է, որ ամեն մարդ չէր կարող այդ ոլորտում գործունեություն ծավալել, եւ դրանում նաեւ մեծ ներդրում էր ունեցել թե՛ Մհեր Սեդրակյանը եւ թե՛ Արթուր Վանեցյանի մայրը, որը նախկինում միշտ պետական աշխատող է եղել ու տարբեր պաշտոններ է զբաղեցրել: Ամենահատկանշական հանգամանքն այն է, որ բեռնափոխադրող ընկերության բոլոր բեռնատարները ձեռք էին բերվում բացառապես Սաշիկ Սարգսյանին պատկանող «Ման» մակնիշի ներկայացուցչությունից, որում մասնաբաժին ունի նաեւ Արթուր Վանեցյանի հայրը, իսկ ընկերության տնօրենն էր Նարեկ Սարգսյանը՝ հայտնի Գոնսալեսը:

Հեղափոխությունից հետո Վանեցյանը մեծ վարպետությամբ կարողացավ շրջանցել Թոխմախի Մհերին, իսկ հեղափոխությունից անմիջապես հետո

Շարունակությունը՝ էջ 3

Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանին

Հարգելի պարոն մարզպետ
Երկու տարի է, ինչ տպագրության է պատրաստ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ճանաչված գրականագետ Դավիթ Գասպարյանի հեղինակած երկու նոր մենագրությունը՝ «Համո Սահյան» եւ «Ակսել Բակունց»:
Հիշեցնենք՝ Համո Սահյանին եւ Ակսել Բակունցին նվիրված նախորդ մենագրությունները (նույն հեղինակի կողմից) հրատարակվել են 2003 եւ 2009 թվականներին, որոնք շատ արագ սպառվել են:
Նոր մենագրություններն էականորեն լրամշակված եւ հարստացված են:
Գրքերը, որոնք ներկայացնում են Ակսել Բակունցի եւ Համո Սահյանի կյանքն ու ստեղծագործությունը, վերլուծում եւ գնահատում են նրանց երկերը, բացահայտում արվեստի գաղտնիքները, մեծ պահանջարկ ունեն:
Եվ, այդուհանդերձ, Սյունյաց աշխարհի բոլոր ժամանակների մեծագույն զավակներից երկուսին նվիրված մենագրությունները չեն տպագրվում՝ հովանավորներ չլինելու պատճառով:
Ո՞րն է մեր եւ հազարավոր սյունեցիների խնդրանքն ու առաջարկությունը:
Արժանին մատուցենք մեր մեծերին՝ Ակսել Բակունցին եւ Համո Սահյանին՝ այդ մենագրությունները դնելով ընթերցողի սեղանին:
Այդ նպատակով, կարծում ենք, տեղին կլինի Ակսել Բակունցին նվիրված մենագրության տպագրության հարցը քննարկման առարկա դարձնել Գորիսում եւ խնդրո առարկայի վրա հրավիրել տեղական այն իշխանավորների ու այն գործարարների ուշադրությունը, ովքեր շատ թե քիչ հասկանում են Բակունց երեւույթի մեծությունն ամբողջ հայ ազգի համար:
Սիսիանում նույնպես, վստահ ենք, կգտնվեն գործարարներ, ովքեր իսկապես հասկանում են Համո Սահյանի անզուգական պոեզիան եւ նրա անունն ու լուսանկարը տեղի-անտեղի չեն ծառայեցնում իրենց անձը գովազդելու համար:
Եվ նման սրտացավ մարդկանց մեկենասությամբ մեզ կհաջողվի հրատարակել «Ակսել Բակունց» եւ «Համո Սահյան» մենագրությունները:
Հեղինակը պատրաստակամ է ամբողջ տպաքանակը թողնել Սյունիքում՝ իրեն վերցնելով ընդամենը 50-70 օրինակ:
Հարգելի պարոն մարզպետ
Մենք ծանոթ ենք մենագրություններին եւ ուզում ենք հավատացնել՝ այդ որակի եւ ընդգրկման մենագրություններ առաջիկա տարիներին դժվար թե ծնվեն:
Այնպես որ՝ տեր կանգնենք Ակսել Բակունցին եւ Համո Սահյանին նվիրված հրաշալի մենագրություններին, ունենանք այդ գրքերը:
Հուսով ենք, որ համայնքային այդ մտահոգությունը կհամակի նաեւ Ձեզ:
Ի դեպ, մենք պատրաստ ենք մենագրություններից յուրաքանչյուրը հրատարակել «Սյունյաց երկրի» առանձին եւ հատուկ համարով:
Հարգանքով՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Կապան համայնքի ղեկավար Գեւորգ Փարսյանին. առաջարկություն Մաքսիմ Հակոբյանի հիշատակը հավերժացնելու մասին

Հարգելի պարոն Փարսյան
Մենք Ձեզ ճանաչել եւ ճանաչում ենք որպես Կապանի տարածաշրջանի արժանավոր զավակ, երկրամասի երախտավորների հանդեպ մեծագույն հարգանքով առլեցուն, Կապանի նոր օրվա կերտմանն ակտիվ մասնակցող, Կապանի լավագույն ավանդույթները կրող եւ հարստացնող անձնավորություն:
Նաեւ այդ հանգամանքը հաշվի առնելով Ձեզ ենք դիմում հասունացած մի հարցով՝ ակնկալելով պատշաճ ըմբռնում եւ դրական արձագանք:
Խոսքը Կապանի պատվավոր քաղաքացի Մաքսիմ Անուշավանի Հակոբյանի հիշատակը Սյունիքի մարզկենտրոն Կապանում հավերժացնելու մասին է:
1998-2014 թթ. գլխավորելով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը, Մաքսիմ Հակոբյանն արել է հնարավոր առավելագույնը՝ մարզկենտրոնի սոցիալ-տնտեսական եւ քաղաքաշինական խնդիրների լուծման, հոգեւոր-մշակութային կյանքի հետեւողական զարգացման, հազարավոր մարդկանց հանապազօրյա խնդիրները հոգալու ուղղությամբ:
Նրա շնորհիվ, առանց չափազանցության, այդ ընկերությունը դարձել էր տարածաշրջանի բոլոր բնակավայրերի (եթե ոչ ամբողջ Սյունիքի) սոցիալական կացության պատասխանատուն:
Անշուշտ, այդ ամենի համար ժամանակին նա գնահատվել է պետական իշխանության կողմից:
Սակայն մենք պարտք ունենք Մաքսիմ Հակոբյանին յուրովի գնահատելու մեր իսկ փոքր հայրենիքում՝ Սյունիքի մարզկենտրոնում:
Գնահատման ամենաողջամիտ տարբերակը, կարծում ենք, նրա հիշատակի պատշաճ հավերժացումն է:
Դրանով ոչ միայն մեր գնահատականը (հետմահու) կտանք նրա արած-դրածին, նրա ազնիվ ու անբասիր գործունեությանը, այլեւ աճող սերնդի մոտ հարգանքի ու պատկառանքի հունդեր կսերմանենք մեր երկրամասի բոլոր ժամանակների նվիրյալների հանդեպ:
Դրանով մերօրյա բոլոր տնտեսվարողներին, գործարարներին եւս մեկ անգամ կհիշեցնենք, որ Կապան մարզկենտրոնը մեր ընդհանուր տունն է, եւ յուրաքանչյուր ոք իր կարելիությունների չափով պետք է նպաստի համայնքի առջեւ ծառացած խնդիրների լուծմանը:
Անտարակույս, Ձեր եւ համայնքի ավագանու որոշելիքն է, թե ինչպես հավերժացնել Մաքսիմ Հակոբյանի հիշատակը:
Բայց հնարավոր տարբերակներ կարող են լինել նաեւ մարզկենտրոնի որեւէ փողոց նրա անվամբ կոչելը կամ Կապանի Գարեգին Նժդեհի փողոցի 16 շենքի բակում նրա կիսանդրին կանգնեցնելը կամ նույն շենքի պատի վրա հարթաքանդակ տեղադրելը. այդ շենքի առաջին հարկում էր Մաքսիմ Հակոբյանի կապանյան նստավայրը տեւական ժամանակ:
Հարգելի պարոն Փարսյան
Խնդրում ենք Ձեզ՝ համայնքի ավագանու հետ միասին քննարկման առարկա դարձնել մեր առաջարկությունը եւ օրենքով սահմանված կարգով ընթացք տալ դրան:
Մաքսիմ Հակոբյանը մեծ հարգանք եւ հեղինակություն է վայելել Կապան քաղաքում ու ամբողջ տարածաշրջանում, նրա մասին անմոռաց հիշողություններ են պահպանվում ճանաչողների սրտերում:
Այնպես որ՝ համոզված ենք՝ նրա հիշատակը հավերժացնելու քայլը համընդհանուր հարգանքով կընդունվի:
Նախապես շնորհակալություն՝ մեր առաջարկության իրագործմանն ընդառաջելու եւ աջակցելու համար:
Հարգանքով՝
Էդիկ Բարսեղյան, *Սյունիքի մարզպետ 2000-2004 թթ., գեներալ-լեյտենանտ, Կապանի պատվավոր քաղաքացի*
Ռոման Նավասարդյան, *Սյունիքի մարզպետ 1998-2000 թթ., Կապան քաղաքի պատվավոր քաղաքացի*
Մուրազ Սարգսյան, *գեներալ-լեյտենանտ*
Համլետ Հայրապետյան, *բժշկական գիտությունների դոկտոր, ԵՊԲՀ սրտաբանության ամբիոնի պրոֆեսոր, «Էրեբունի» սրտաբանական կենտրոնի ղեկավար, ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր սրտաբան*
Լեոնիդ Գրիգորյան, *Արցախյան հերոսամարտի ակտիվ մասնակից, պահեստազորի փոխգնդապետ*
Ռիտա Դավթյան, *հասարակական գործիչ*
Սուսաննա Մարտիրոսյան, *մշակույթի եւ հասարակական գործիչ*
Վարդան Գեւորգյան, *Քաջարանի քաղաքապետ 2002-2016 թթ.*
Համլետ Ալեքսանյան, *«Կապանի մեքենաշինական գործարան» ԲԲԸ գլխավոր տնօրեն*
Բորիկ Մինասյան, *Կապանի արվեստի թանգարանի տնօրեն, «Մովսես Խորենացի» մեդալակիր*
Վահրամ Օրբելյան, *«Սյունյաց երկիր» թերթի գլխավոր խմբագրի տեղակալ*
Արկադի Ծատուրյան, *արձակագիր (Գորիս)*
Հայկ Հակոբյան, *Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ, Կապանի N2 ավագ դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն*
Հենզել Առաքելյան, *պատմաբան (Սիսիան)*
Վլադիկ Մարտիրոսյան, *«Խուստուփ» բնապահպանական-հասարակական կազմակերպության նախագահ*
13 ՄԱՅԻՍԻ 2020 Թ.

Պոլոսկով Միերը խորացնում է Քաջարանի իրական սեփականատերերի առեղծվածը, իսկ Սյունիքը սպասում է վարչապետ Նիկոլ Փաշինյանի պարզաբանմանը

Սկիզբը՝ էջ 1

Որպեսզի պարզ լինի, թե ինչու հենց այս օրերին լույս աշխարհ եկավ Միերի հարցազրույցը, հիշենք ակնհայտը. վերջին օրերին ընթերցողի սեղանին են հայտնվել մամուլի մի շարք հրապարակումներ, որոնք ավելի են խորացնում Քաջարանի իրական սեփականատերերի առեղծվածը:

Ահա, թե ինչ հրապարակումների մասին է խոսքը.

- «Բաժնետերերի նոր փոփոխություններ Զանգեզուրի պղնձամոլիբդենայինում. «Քրոնիմետը» սեփականատերերի ցանկում այլեւս չկա» (Մկրտիչ Կարապետյան, Սիվիլնեթ, 2 մայիսի),
- ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար Մանե Գեւորգյանի ֆեյսբուքյան գրառումն առ այն, որ ԱԱԾ նախկին տնօրեն Արթուր Վանեցյանը կեղծ փայատերերի օգնությամբ ՀՊՄԿ-ում բաժնեմասեր է ձեռք բերել, որ Արթուր Վանեցյանի հորը պատկանող ընկերությունը դարձել է նաեւ ՀՊՄԿ-ի բեռների խոշոր փոխադրող,
- ապրիլի 29-ին հայտարարությամբ հանդես եկավ ԱԱԾ նախկին տնօրեն Արթուր Վանեցյանը՝ նշելով՝ «Պաշտոնապես հայտարարում եմ, որ ՀՊՄԿ-ում փայաբաժինների փոփոխության ողջ պատմությունը կատարվել է վարչապետի անմիջական գիտությամբ»,
- «Առաջին լրատվականը» մայիսի 1-ին հայտարարեց, որ Վանեցյանը ՀՊՄԿ-ի բեռների խոշոր փոխադրող ընկերությունը հիմնել է Միեր Սեդրակյանի որդու հետ համատեղ,
- Ռուսաստանի առողջապահության նախկին նախարարը՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենայինի բաժնետեր (Մկրտիչ Կարապետյան, Սիվիլնեթ, 25 մարտի 2020 թ.),
- Ի՞նչ է կատարվում Քաջարանում. հանքաքարի արդյունահանման ծավալները մեծանում են, պետությանը վճարվող հարկերը՝ նվազում («Սյունյաց երկիր», 25.04.2020թ.),
- Մի քանի օր առաջ էլ Էդմոն Մարուքյանը (8 մայիսի 2020 թ.) հայտնի բանակռվում կասկածի տակ դրեց «Քրոնիմետի» հանկարծակի անհետանալը ՀՊՄԿ-ի բաժնետերերի ցանկից եւ փորձեց իմանալ, թե ո՞ւմ է անցել նրան պատկանող 75 տոկոս բաժնեմասը:

* * *

Մամուլի վերոնշյալ հրապարակումներում բարձրացված բազմաթիվ հարցերից եւ ոչ մեկին, ցավոք, Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեռեւս չի պատասխանել:

Եվ մոգոնելով Միերի հետ զրույցը, նրա նախաձեռնողները փորձել են պատասխանել հայ հանրությանը հետաքրքրող այդ հարցերին կամ ստեղծել պատասխանի պատրանք:

Առաջ անցնելով փաստենք, որ հարցազրույցում Միերը չի պատասխանել բարձրացված եւ հայ հանրությանը հետաքրքրող հարցերից գոնե մեկին:

Ընդհակառակը՝ հարցազրույցն ավելի է խորացրել կասկածը, թե ինչ է կատարվում Հայաստանի ամենախոշոր հանքարդյունաբերական ձեռնարկությունում:

Նախ՝ արձանագրենք մի անմեղ իրողություն. Միերին Սյունիքում որեւէ մեկը լուրջ չի ընդունում՝ անգամ միրուքային հեղափոխությունից հետո:

Հայաստանի կառավարությունն էլ իր հերթին շարունակում է գաղտնի պահել նրա կենսագրությունը:

«Սյունյաց երկիրն» այդ փաստը արձանագրել է դեռեւս 2017 թ. սեպտեմբերի 2-ին հրապարակված մի հոդվածում՝ «Էյ, ո՞վ ես դու, որ...» վերտառությամբ:

Հիմա՝ հարցազրույցի մի քանի ակնհայտ աղավաղումների մասին:

Միերն իր զրույցում շրջանցեց Սյունիքին վաղուց հետաքրքրող հարցը, թե ինչպե՞ս կամ ի՞նչ եղանակով է ինքը դարձել ընկերության բաժնետոմսերի 7,5 տոկոսի սեփականատեր, ինչպե՞ս կամ ի՞նչ եղանակով են ընկերության սե-

Բաժնետերերի նոր փոփոխություններ Զանգեզուրի պղնձամոլիբդենայինում. «Քրոնիմետ»-ը սեփականատերերի ցանկում այլեւս չկա

Սկիզբը՝ էջ 1

կան անձանց բաժնեմասերի հանրագումարը 32,5 տոկոս է: Այլ կերպ ասած՝ միայն 32,5 տոկոսին տիրապետող ֆիզիկական անձանց տվյալներն են հասանելի դարձել հայտարարագրում, մնացյալ 62,5 տոկոսի վերաբերյալ ՁՊՄԿ-ն մեկ նախադասությամբ գրել է՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն հանդիսանում է իր կողմից թողարկված բաժնետոմսերի 62,5 տոկոսի սեփականատեր: Ֆիզիկական անձանց մասին տվյալներ չկան:

Վերադառնանք 32,5 տոկոսին: Մարտի 27-ից ՁՊՄԿ-ի 12,5 տոկոսի բաժնետեր է դարձել Գերմանիայի քաղաքացի Թոմաս Հայլը: Վերջինս նաեւ ՁՊՄԿ խորհրդի նախագահն է, եղել է «Քրոնիմետ մայնինգ»-ի տնօրեն: Թե ումից է բաժնեմասն անցել Հայլին, դեռ պարզ չէ:

ՁՊՄԿ-ի մյուս 12,5 տոկոսի բաժնետերը ՌԴ առողջապահության նախկին նախարար Միխայիլ Զուրաբովն է: Այդ մասին Սիվիլնեթը գրել էր մարտի 25-ին: Զուրաբովը ՁՊՄԿ-ի 12,5 տոկոսի սեփականատերն է դարձել կիպրական Walnort Finance Limited ընկերության միջոցով՝ այս տարվա փետրվարի 3-ին: Բացի այն, որ Զուրաբովը ռուսական քաղաքական համակարգի հայտնի դեմքերից է ու զբաղեցրել է մի շարք պատասխանատու պաշտոններ, նա նաեւ շվեյցարական Exoil group ընկերության տնօրենների խորհրդի անդամ է: Այս ընկերության տնօրենների խորհրդում է նաեւ Արթուր Վանեցյանի հորեղբոր որդին՝ Կարեն Վանեցյանը:

Տես նաեւ՝ Ռուսաստանի առողջապահության նախկին նախարարը՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենայինի բաժնետեր:

Պղնձամոլիբդենային կոմբինատում 7,5 տոկոս բաժնեմասի իրական սեփականատեր է ընկերության գլխավոր տնօրեն Միեր Պոլոսկովը: Նա այս բաժնեմասը ձեռք է բերել 2018-ի հունիսի 20-ին: Նույն օրը 2,5-ական տոկոսներ ձեռք են բերել նրա տեղակալ Նարեկ Ամբարյանն ու Կարեն Հակոբյանը՝ Սյունիքի նախկին մարզպետ Վահե Հակոբյանի եղբայրը:

Ըստ օրենքի՝ իրական սեփականատեր են հանդիսանում 10 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող ֆիզիկական անձինք եւ հենց նրանք են պարտավոր ներկայացնել հայտարարագիր: Պոլոսկովի, Ամբարյանի ու Հակոբյանի բաժնեմասերն առանձին-առանձին չեն հասել 10 տոկոսի, ու նրանք իրավունք ունեին տվյալներ չներկայացնել:

> ***Ըստ օրենքի՝ իրական սեփականատեր են հանդիսանում 10 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող ֆիզիկական անձինք եւ հենց նրանք են պարտավոր ներկայացնել հայտարարագիր:***

Որոնք են միջանկյալ ընկերությունները

ՁՊՄԿ-ի 12,5 տոկոսի սեփականատեր Թոմաս Հայլը, ինչպես վերեւում նշեցինք, կապված էր «Քրոնիմետ» ընկերությունների խմբի հետ: Հայլը, սակայն, իր բաժնեմասը ձեռք է բերել մեկ այլ միջանկյալ՝ գերմանական «Սի 2 քափիթալ» ընկերության միջոցով:

Միխայիլ Զուրաբովի համար միջանկյալ ընկերություններ են հանդիսացել Walnort Finance Limited-ն ու «Մուն մեթալս»-ը:

Միեր Պոլոսկովի, Կարեն Հակոբյանի ու Նարեկ Ամբարյանի համար միջանկյալ ընկերություն է դարձել «ԱՍՓ հոլդինգ»-ը:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի իրական սեփականատերերի հարցը վերջին օրերին հայտնվել էր մամուլի էջերում ու բուռն քննարկման արժանացել: Վարչապետ Նիկոլ Փաշինյանի մամուլի քարտուղար Մանե Գեւորգյանը հայտարարել էր, որ *«ՁՊՄԿ-ում Միքայել Մինասյանի փայաբաժինը, օրինակ, առերեւույթ պաշտոնեական լիազորությունների չարաշահմամբ եւ կրկին կեղծ փայատերերի օգնությամբ ձեռք է բերել ԱԱԾ նախկին տնօրեն Արթուր Վանեցյանը»:* Վանեցյանն ի պատասխան հայտարարեց, որ հայտարարությունն իրականության հետ աղերս չունի, եւ ասաց, որ զրպարտության համար դիմելու է դատարան:

ՄԿՐՏԻՉ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
CIVILNET.AM

Ի՞նչ կապ է ունեցել Արթուր Վանեցյանը Քաջարան ներխուժած հրոսակախմբի հետ եւ արդյո՞ք աջակցել է հայտնի մարզպետի սյունիքյան կամայականություններին

Սկիզբը՝ էջ 1

Վովայի Արշակը եւ Վստրեչի Ապերը հենց Վանեցյանի քավորությամբ վերադարձան եւ շարունակեցին վայելել տարիների ընթացքում անհասկանալի ճանապարհով ձեռք բերված հարյուրավոր միլիոն դոլարների հասնող կարողությունները: Իսկ Վանեցյանի մեծ ախպերը (նա մինչ օրս էլ այդպես է դիմում Թոխմախի Միերին), պարզվեց՝ սուրբ է, որեւէ հանցագործություն չի կատարել:

Նշենք, որ Վանեցյանի ու ՀՀԿական նախկին պատգամավոր, գործարար Միեր Սեդրակյանի մտերմությունը սկսվել է դեռեւս Վանեցյանի՝ Էրեբունի վարչական շրջանի ԱԱԾ ղեկավար նշանակվելու ժամանակահատվածից: Երբ Վանեցյանը նշանակվեց ԱԱԾ Էրեբունի վարչական շրջանի ղեկավար, հին Հայաստանի Էրեբունու քրեաօլիգարխիայի հայրը՝ Թոխմախի Միերը, որն իր ավտորիտետ լինելու հանգամանքը չէր թաքցնում ԱԺ պատգամավոր եղած ժամանակ, հրահանգել էր իրենցով անել նորաթուխ ղեկավարին: Դա ընդունված երեւույթ է եղել այդ իրականության մեջ, որ տարածքի ԱԱԾ պետին պետք է «նայել», որ ավել-պակաս բաներ չհասնեն «վերեւների» ականջին: Այդպես «նայելով»՝ Միեր Սեդրակյանը շատ հեշտ իրենով արեց Վանեցյանին: Եվ հետո Վանեցյանն այդ ժամանակ պատահական մեկը չէր: Բոլորն էլ գիտեին, որտեղ է աշխատում նրա մայրը, եւ ինչ հետեւանքներ կարող էր դա ունենալ: Այդ իսկ պատճառով, Վանեցյանի հետ տեղի քրեաօլիգարխիան էլ ավելի մտերմություն էր ցանկանում հաստատել, որը եւ տեղի է ունենում, եւ այդ մտերմությունը վերաճում է «մեծ ախպերության» ու բերում նաեւ համատեղ բիզնեսների, համատեղ լոգիստիկ ընկերություն հիմնելուն, ինչի մասին արդեն գրեցինք»:

Հ.Գ. Սյունիքում որոշակի սպասելիքներ ունեն Արթուր Վանեցյանից եւ նրա ընտանիքից՝
ա) անհապաղ բեռնատարները հանել Սյունիքից՝ տեղը զիջելով սյունիքյան բեռնատարներին, որոնց վարորդների զգալի մասը գործազուրկ է,
բ) հրապարակավ բացատրություն տալ մեր երկրամասի բնակչությանը՝ ի՞նչ կապ է ունեցել ինքը Քաջարան ներխուժած եւ մինչեւ օրս այստեղ վխտող հրոսակների հետ: //

Սեփականատեր դարձել Նարեկը (Ամբարյան), Վահեի եղբայր Կարենը՝ յուրաքանչյուրը 2,5 տոկոսի չափով:

Միերը չպատասխանեց հարցին՝ Վանեցյան Արթուրն իրո՞ք կեղծ փայատերերի օգնությամբ բաժնետոմսեր է ձեռք բերել Քաջարանում, ինչի մասին բարձրաձայնել է ՀՀ վարչապետի մամուլի քարտուղարը:

Միերը չպատասխանեց հարցին, թե ի՞նչ եղանակով է 2014-ից հետո «Զանգեզուր մայնինգում» կատարվել սեփականատերերի փոփոխություն (նվիրատվությո՞ւն, ռեկե՞տ, առուվաճա՞ռք...):

Ի դեպ, Միերը չպատասխանեց մամուլում բազմիցս բարձրացված հարցին՝ արդյո՞ք բնության մեջ գոյություն ունի Ժան Ժակ Լուի Փոլ Բաֆե անունով անձնավորություն, որին, ըստ Սիվիլնեթի, մոլորակում ոչ ոք չի տեսել, ով էլ տիրացել է «Զանգեզուր մայնինգին», ով էլ իր բաժնեմասը վաճառել է Միխայել Զուրաբովին:

Միերը չպատասխանեց հարցին, թե Քաջարանի պատճառով ստեղծված բնապահպանական աղետալի վիճակից տուժած սյունեցի վարորդների փոխարեն ինչո՞ւ է կոմբինատից բեռներ փոխադրում Վանեցյան Արթուրի հայրը:

Միերը չպատասխանեց ամենագլխավոր հարցին՝ ինչո՞ւ է «Քրոնիմետը» հրաժարվել բաժնետոմսերի 75 տոկոսից:

Իմիջիայլոց, «Սյունյաց երկիրը» դեռեւս 2017 թ. նոյեմբերի 9-ի հրապարակման մեջ էր նշել, որ Պիլարսկին ուզում է վաճառել իր բաժնեմասը եւ ինչու է ուզում վաճառել (անպայման ընթերցեք հոդվածը՝ *«Ծերուկ Պիլարսկին ի վերջո հասկացել է, որ խաբված է, եւ այն մասին, թե ինչո՞ւ էր Պետրոս Մեծ կայսրն առանց դատ անելու գլխատում հույժ կարճահասակներին»* (9 նոյեմբերի 2017 թ., N 36 (454)):

Միերը չի ասում, թե ո՞ւմ է անցել «Քրոնիմետին» պատկանող 75 տոկոսի 62,5 տոկոսը:

Միերն ասում է՝ «ՁՊՄԿ բաժնետերերի ժողովի որոշմամբ ընկերությունը ձեռք է բերել «Քրոնիմետ» ընկերությունների խմբին պատկանող բաժնետոմսերը (75 տոկոս)»:

Եվ հարց է ծագում՝ իսկ ո՞ր բաժնետերերի ներկայացուցիչներից բաղկացած ժողովի որոշմամբ է ՁՊՄԿ ընկերությունը ձեռք բերել «Քրոնիմետի» բաժնետոմսերը:

Ի վերջո ի՞նչ ասել է ՁՊՄԿ ընկերություն այս դեպքում, երբ այլեւս 75 տոկոսի սեփականատեր «Քրոնիմետը» չկա:

Դատելով Միերի ասածից, նաեւ Սիվիլնեթի 2020 թ. մայիսի 2-ի հրապարակումից՝ այդ պահին ՁՊՄԿ ընկերության սեփականատերերն են եղել՝

- Գերմանիայի քաղաքացի Թոմաս Հայլը (12,5 տոկոս),
- ՌԴ առողջապահության նախկին նախարար Միխայիլ Զուրաբովը (12,5 տոկոս),
- Միեր Պոլոսկովը (7,5 տոկոս),
- Նարեկ Ամբարյանը (2,5 տոկոս)
- Վահե Ա. Հակոբյանի եղբայր Կարենը (2,5 տոկոս):

Եվ ուրեմն՝ արդյո՞ք վերոնշյալ հինգ անձինք են ձեռք բերել «Քրոնիմետ» գերմանական ընկերության մյուս 62,5 տոկոսը, թե՞ ուրիշ անձինք, որոնց անունները գաղտնի է պահվում:

Ահա, թե որքան հարցեր է առաջ բերել եւ որքան հարցեր է անպատասխան թողել Միերի հարցազրույցը:

Անկեղծորեն՝ որեւէ մեկը Սյունիքում անհայտ կենսագրությամբ Միերից լուրջ եւ հիմնավոր խոսք չէր էլ սպասում...

Ուստի եւ սպասում ենք Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի պարզաբանումին, մանավանդ որ Արթուրը (Վանեցյան) օրեր առաջ բարձրաձայնեց՝ «Պաշտոնապես հայտարարում եմ, որ ՁՊՄԿ-ում փայաբաժինների փոփոխության ողջ պատմությունը կատարվել է վարչապետի անմիջական գիտությամբ»:

Հ.Գ. 1 / Սյունիքյան բեռնատարների վարորդների զգալի մասը շարունակում է մնալ գործազուրկ: Քաջարանի բեռնափոխադրումները շարունակում է իրականացնել Վանեցյան Արթուրի հայրիկի եւ Սեդրակյան Միերի որդու ընկերությունը:

Հ.Գ. 2 / Երրորդ երկրներում հանքավայրեր շահագործող խոշոր ընկերությունների կենտրոն դառնալու երազը հրամցնելուց առաջ Միեր Պոլոսկովը պետք է պատասխանի, թե վերջին երկու տարում ի՞նչ է կատարվում Արծվանիկի պոչամբարում, որքա՞ն հանքաքար է տարեկան արդյունահանվում եւ ինչո՞ւ է 2020 թվականի առաջին եռամսյակի արդյունքներով կտրուկ նվազել պետությանը վճարվող հարկերի չափը:
Ի դեպ, ինչպե՞ս էր ստացվել, որ մեկ օրում ՊԵԿ-ը կարողացել էր «ստուգել» Հայաստանի ամենախոշոր հանքարդյունաբերական ձեռնարկության գործունեությունը: Ի՞նչ ճակատագիր ունեցավ հայտնի քրեական գործը, որ հարուցվել էր պոչուկատարի աղմկահարույց վթարից հետո:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»

Գյուղատնտեսական շուկա եւ բարեկարգ ավտոկայանատեղի Մեղրու մաքսակետում

Ավարտվել են Մեղրու մաքսակետին կից գյուղատնտեսական շուկայի եւ ավտոկայանատեղիի կառուցման աշխատանքները, բարեկարգվել են դրանց հարակից տարածքները:

Շինաշխատանքներն իրականացվել են համայնքի տնտեսական եւ սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակում:

«Մեղրի քաղաքում՝ Մ-2 միջպետական ճանապարհի հարեւանությամբ, շուկայի կառուցում եւ հարակից տարածքների բարեկարգում» ու «Ագարակ քաղաքում՝ Մեղրու մաքսակետին կից, ավտոկայանատեղիների եւ դրանց հարող տարածքների բարեկարգում» ծրագրերի համար հատկացվել է ընդհանուր 99 մլն 137 հազար դրամ, որից 48 մլն 685 հազար դրամը հատկացվել է ՀՀ պետական բյուջեից, 50 մլն 452 հազար դրամը՝ Մեղրու համայնքային բյուջեից: Աշխատանքներն իրականացրել է «Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ-ն: //

Բարեկարգվում են դեպի գյուղական բնակավայրերը տանող ճանապարհները

Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային պահպանման եւ շահագործման աշխատանքների շրջանակում վերանորոգվում է Ագարակ-Եղվարդ-Ուժանիս ճանապարհը: Աշխատանքների պատվիրատուն Սյունիքի մարզպետարանն է: Ճանապարհի որոշակի հատվածներում կատարվում է համատարած նորոգում, որոշ հատվածներ փոսալցվում են: //

Ռ. Մինասյան փողոցից դեպի Կավարտ տանող ճանապարհահատվածում շինարարական եռուզեռ է

Ապրիլի 16–ից մեկնարկել է Կապան քաղաքի Ռաֆայել Մինասյան փողոցի եւ Կավարտ թաղամաս տանող ճանապարհահատվածի նորոգման աշխատանքները: Նշյալ ճանապարհը գտնվել է անմխիթար վիճակում, ինչն էլ խոչընդոտել է տրանսպորտի բնականոն երթեւեկությանը, ինչպես նաեւ բնակիչների ազատ եւ հարմարավետ տեղաշարժմանը:

Ճանապարհաշինարարական աշխատանքներն իրականացվում է համայնքային բյուջեի միջոցների հաշվին: Ծրագրի ընդհանուր արժեքը 15 մլն 640 հազար դրամ է. մրցույթում հաղթած Կապանի «Նորոգշին» ՍՊԸ-ն աշխատանքներն իրականացնում է 9 մլն 980 հազար դրամով:

Ծրագրով նախատեսված՝ Ռ.Մինասյան փողոցի փոսային նորոգման աշխատանքներն արդեն իսկ ավարտված են, իսկ Կավարտ տանող ճանապարհի փոսալցման եւ որոշակի հատվածների (մոտ 120, 55 եւ 41 մետր երկարությամբ) ասֆալտապատման աշխատանքներն ավարտական փուլում են:

Ճանապարհը հիմնանորոգող «Կապանի Նորոգշին» ՍՊԸ-ն, ծրագրից դուրս՝ սեփական միջոցներով իրականացրել է նաեւ Կավարտի գերեզմաններ, Կավարտի տնակներ, Արփիկ եւ Լեռնագործներ փողոցի 4-րդ նրբանցք տանող գրունտային ճանապարհների հարթեցման, լայնացման եւ բարեկարգման, ինչպես նաեւ ջրահեռացման կողային առուների մաքրման աշխատանքներ: Ասֆալտապատվել է նաեւ գյուղից դեպի գերեզմանատուն թեքվող ճանապարհահատվածը (կանգառի հարեւանությամբ):

Նշենք նաեւ, որ տվյալ ճանապարհից օգտվում են Արփիկ, Աշոտավան, Լենինաքեր թաղամասերի եւ Լեռնագործներ փողոցի նրբանցքների բնակիչները: //

Կապանի երբեմնի արհեստական լճի տարածքի անմխիթար վիճակը շտկվում է. սկսված են կառուցապատման աշխատանքները

Անցած տարվա նոյեմբերին՝ Կապանի համայնքապետ Գեւորգ Փարսյանի պաշտոնավարման տարեդարձի առթիվ, հարցազրույց էինք անցկացրել: Ի շարս այլ հարցերի՝ «Սյունյաց երկիրը» հետաքրքրվել էր հացի գործարանի մոտակայքի երբեմնի արհեստական լճի տարածքի անմխիթար վիճակով: Տարիներ առաջ՝ ավելի ստույգ 2010-ին, այդտեղ՝ «Մատչելի բնակարան երիտասարդ ընտանիքներին» բնակարանային ապահովության սոցիալական ծրագրի շրջանակում (ծրագիրը նախաձեռնել էր «ԵՊՀ շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպությունը), նախատեսվում էր կառուցել բազմաբնակարան-բազմաֆունկցիոնալ շենքային համալիր: Բայց գործը շենքի հիմքերի փորման եւ փոսորակի մշակման աշխատանքներից այն կողմ չէր անցել (բացահայտվել էին մակերեւութային գրունտային ջրեր եւ այլ երկրաբանական խնդիրներ), եւ շենքի շինարարությունն անորոշ ժամկետով կասեցվել էր, քանի որ լրացուցիչ ֆինանսական միջոցներ պիտի տրամադրվեին ստեղծված վիճակը հաղթահարելու համար: Արդյունքում տարածքն ավիառմբահարությունից տուժած պատկեր էր հիշեցնում եւ հարուցում կապանցիների զարմանքը. այս ամենն ինչքա՞ն պիտի շարունակվի...

Վերջերս անցնելով չկայացած շինհրապարակի մոտով՝ նկատեցինք, որ այդտեղ շինարարական տեխնիկա է աշխատում, եւ պարզաբանում ստանալու նպատակով դիմեցինք Կապանի համայնքապետ Գեւորգ Փարսյանին, ով «Սյունյաց երկրին» փոխանցեց, որ այդտեղ մեկ ամիս առաջ շինարարական աշխատանքներ են սկսվել, որն իրականացնում է «Նորոգշին» ՍՊ ընկերությունը:

«ԵՊՀ շրջանավարտների միավորում»-ը շինարարության հայտ է ներկայացրել, ըստ որի նախագծով նախատեսվում է կառուցել առողջարարական համալիր՝ լողավազանով եւ ֆիտնես սրահով: Համալիրը ներառում է նաեւ սրճարան, ռեստորան: Հնարավոր է նաեւ, որ այս ամենին ավելանա հյուրանոցային համալիրը: Այս վերջինը դեռեւս կոնկրետացված չէ: Շինթույլտվությունը տրված է երեք տարի ժամկետով:

– Մեզ համար կարեւորն այն է, որ այդտեղ կառուցապատում լիներ, հիմա, փառք Աստծո, սկսվել է շինարարությունը, – զրույցի ավարտին ավելացրեց համայնքապետը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Գորիսի քաղաքապետը հայտնվել է անելանելի իրավիճակում

«Ժողովուրդ» թերթը գրում է. «Գորիսի քաղաքապետ Առուշ Առուշանյանը հայտնվել է անելանելի վիճակում: Խնդիրը կապված է դատարանի որոշման հետ: Մասնավորապես, մեզ հայտնի դարձավ, որ 2019 թվականին քաղաքապետ Առուշ Առուշանյանը ՀՀ Սյունիքի մարզի «Գորիս քաղաքի Վազգեն Սարգսյանի անվան թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առեւտրային կազմակերպության տնօրեն Սաիդա Ադունցին հեռացրել է աշխատանքից:

ՆՈՒՀ-ի տնօրենը չի հաշտվում Գորիսի քաղաքապետ Առուշ Առուշանյանի որոշման հետ եւ այն բողոքարկում է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում: 2019 թվականի օգոստոսի 8-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Իգնատ Բեգլարյանը որոշում է կայացնում եւ վերացնում ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի համայնքի ղեկավարի՝ ՀՀ Սյունիքի մարզի «Գորիս քաղաքի Վազգեն Սարգսյանի անվան թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առեւտրային կազմակերպության տնօրեն Սաիդա Վանիկի նկատմամբ որպես կարգապահական տույժ կիրառված նկատողություն հայտարարելու մասին թիվ 51 կարգադրությունը:

Նա վերացնում է նաեւ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի համայնքի ղեկավարի՝ 22.03.2019 թվականի թիվ 52 կարգադրությունը՝ Գորիսի համայնքապետարանի աշխատակազմի եւ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Գորիս քաղաքի Վազգեն Սարգսյանի անվան թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առեւտրային կազմակերպության տնօրեն Սաիդա Ադունցի միջեւ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին, եւ Սաիդա Ադունցին վերականգնում է նախկին աշխատանքում՝ ՀՀ Սյունիքի մարզի «Գորիս քաղաքի Վազգեն Սարգսյանի անվան թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առեւտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում:

Գորիսի քաղաքապետ Առուշ Առուշանյանը չի հանձնվում եւ Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի որոշումը բողոքարկում է ՀՀ վերաքննիչ դատարանում, սակայն այնտեղ եւս պարտվում է, բայց կրկին չի հանձնվում եւ դիմում է ՀՀ վճռաբեկ դատարան. Վճռաբեկ դատարանից եւս մերժում է ստանում:

Ասել է թե՝ 1 տարի առաջ իր կայացրած որոշման համար Առուշ Առուշանյանը հայտնվեց անցանկալի իրավիճակում եւ հիմա դատարանի որոշմամբ պարտավոր է Սաիդա Ադունցին հետ վերադարձնել իր պաշտոնին, այսինքն՝ նշանակել ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Վազգեն Սարգսյանի անվան թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առեւտրային կազմակերպության տնօրեն:

IRAKANUM.AM

Մանկապարտեզներում կգործեն 10-12 հոգանոց խմբեր, երեխաներին ուղեկցողները շենք չեն մտնի. պարետի որոշումը

Մայիսի 17-ին ժամը 23:59-ից ուժի մեջ մտած՝ սահմանափակումների փոփոխությամբ պարետի կողմից սահմանվել են նախադպրոցական կրթության ոլորտի կազմակերպություններում կորոնավիրուսային հիվանդության (covid-19) տարածման կանխարգելման նպատակով անվտանգության կանոնները:

«Առողջ եւ անվտանգ պայմանների ապահովման պարտականությունն ամբողջ ծավալով կրում է հաստատության տնօրենը: Նախադպրոցական կրթական հաստատությունների գործունեության կազմակերպման ժամանակ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) կանխարգելման ուղղությամբ աշխատանքներն իրականացվում են ըստ երկրում համաճարակային իրավիճակի զարգացման փուլերի: Ներկա փուլում պետք է գործեն ստորեւ ներկայացված կանոնները:

1. Ընդհանուր կանոններ

1) Պետք է հնարավորինս ձեռնպահ մնալ կորոնավիրուսի ծանր հիվանդության զարգացման բարձր ռիսկային խմբի աշխատողներին աշխատանքի ներգրավելուց՝ պահպանելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 186-րդ հոդվածով սահմանված կանոնները: Բարձր ռիսկային խմբի մեջ ներառված են՝

ա. թույլ իմունային համակարգ ունեցող անձինք (օր.՝ քաղցկեղ),

բ. 65 տարեկան եւ բարձր տարիքի անձինք,

գ. քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք (շնչառական հիվանդություններ՝ ասթմա, թոքային քրոնիկ հիվանդություն (COPD), էմֆիզեմա կամ բրոնխիտ, սրտի քրոնիկ անբավարարություն, երիկամների քրոնիկ հիվանդություն, լյարդի քրոնիկ հիվանդություն (հեպատիտ), քրոնիկ նյարդաբանական հիվանդություն (Պարկինսոնի հիվանդություն, ցրված սկլերոզ, ուղեղային կաթված տարած),

դ. շաքարային դիաբետ ունեցող անձինք:

2) Բացառվում է երեխային ուղեկցող անձի մուտքը նախադպրոցական կրթական հաստատություն:

3) Բացառվում են նախադպրոցական կրթական հաստատության շենքին հարակից տարածքներում մարդկանց կուտակումները: Հաստատություն հաճախող սաների ընդունումը եւ ճանապարհումն իրա-

Շարունակությունը՝ էջ 8

ԳԹԿ-ն տեղեկություն է հրապարակել բուհերի ընդունելության քննությունների վերաբերյալ

Գնահատման եւ թեստավորման կենտրոնը տեղեկություն է հրապարակել է Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի ու անընդհատ եւ ինտեգրացված կրթական ծրագրերով (առկա) 2020 /2021 ուսումնական տարվա ըստ բուհերի եւ մասնագիտությունների ընդունելության քննությունների ցանկի վերաբերյալ: Ինչպես տեղեկացնում է «Արմենպրես»-ը, դիմորդները ընդունելության քննության եւ մասնագիտությունների նշումով դիմում-հայտը ԳԹԿ են ուղարկում էլեկտրոնային (առցանց) եղանակով՝ մայիսի 25-ից մինչեւ հունիսի 15-ը, ժամը 18:00՝ միասնական քննության համար ԳԹԿ հաշվեհամարին փոխանցելով 1500 դրամ:

Դիմորդներն ընդունելության դիմում-հայտում իրենց ընտրությամբ եւ ցանկացած հաջորդականությամբ հայտագրում են մասնագիտությունները՝ ըստ ուսուցման անվճար եւ վճարովի համակարգերի: Համաձայն ընդունելության դիմում-հայտի՝ դիմորդը կարող է մասնակցել մեկ կամ մի քանի բուհերի՝ մինչեւ երկու անվճար եւ մինչեւ ութ վճարովի մասնագիտությունների մրցույթին, եթե ընտրած բոլոր մասնագիտությունների համար սահմանված է ընդունելության մրցութային միեւնույն առարկայի քննությունը:

Դիմորդին չի թույլատրվում ներկայացնել մեկից ավելի ընդունելության դիմում-հայտ: Բուհեր կարող են ընդունվել միջնակարգ, նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթություն ունեցող անձինք առանց տարիքի սահմանափակման:

Միասնական եւ ներբուհական քննություններն անցկացվում են մեկ փուլով՝ հուլիս ամսվա առաջին տասնօրյակում:

Անվճար եւ վճարովի ուսուցման ընդունելության մրցույթներն անցկացվում են երկու փուլով՝ հիմնական եւ լրացուցիչ:

Մասնագիտությունների մրցույթն անցկացվում է ընդունելության դիմում-հայտի առաջին տողով ընտրված մասնագիտության՝ անվճար եւ վճարովի ուսուցման հայտի գերակայությամբ:

Առաջին հայտագրված մասնագիտության մրցույթով չանցած դիմորդների համար մրցույթն անցկացվում է ընդունելության դիմում-հայտում հայտագրված մասնագիտությունների հերթականությանը համապատասխան, եթե նշված մասնագիտություններում առկա են թափուր տեղեր:

Ընդունելության դիմում-հայտում հայտագրված որեւէ մասնագիտությամբ (ըստ հայտագրման հերթականության) ընդունված դիմորդը չի մասնակցում հայտագրված հաջորդ մասնագիտությունների մրցույթին:

Ընդունելության մրցութային առարկայի քննությունից հավասար միավորների դեպքում, ըստ հերթականության, առավելություն է տրվում՝ մեդալակիր դիմորդներին.

- արվեստի գծով միջազգային եւ հանրապետական մրցույթների հաղթողներին.
- հանրակրթական ուսումնական հաստատություններում 10-12 դասարաններում սովորելու ընթացքում դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների առաջին կարգի դիպլոմ ստացած դիմորդներին.
- ցանկում տվյալ մասնագիտության տողում առկա աստղանիշով (*) մեկ առարկայի դեպքում ավարտական փաստաթղթում առավել բարձր գնահատական ունեցող դիմորդներին, իսկ աստղանիշով(*) մեկից ավելի առարկաների դեպքում՝ այդ առարկաների գնահատականների միջին թվաբանական առավել բարձր միավոր ունեցող դիմորդներին.
- պետական ավարտական քննություններից միջին թվաբանական առավել բարձր գնահատական ունեցող դիմորդներին.
- տվյալ մասնագիտությանը համապատասխան միջին մասնագիտական կրթություն ստացած դիմորդներին:

Անվճար եւ վճարովի ուսուցման մրցույթների հիմնական փուլի արդյունքներն ամփոփվում են մինչեւ տվյալ տարվա հուլիսի 18-ը:

Ներբուհական քննությունների արդյունքներով մրցույթն անցկացվում է համապատասխան բուհում: Մրցույթի արդյունքը հաստատվում է հանրապետական ընդունող հանձնաժողովում, որից հետո բուհի ռեկտորը հրամանագրում է ուսանողներին:

Հանրապետական ընդունող հանձնաժողովի կողմից ընդունելության քննությունների հիմնական փուլի մրցույթի արդյունքները հաստատվելուց հետո, բուհերում մասնագիտությունների թափուր տեղերի առկայության դեպքում, ընդունելության քննությունից դրական միավոր ստացած, սակայն մրցույթից դուրս մնացած դիմորդները կարող են մասնակցել թափուր տեղերի մրցույթին: Թափուր տեղերի մրցույթին մասնակցելու համար դիմորդները մասնագիտությունների նշումով նոր դիմում-հայտը ԳԹԿ են ուղարկում էլեկտրոնային (առցանց) եղանակով հուլիսի 20-ից մինչեւ հուլիսի 22-ը, ժամը 18.00:

Դիմորդները ընդունելության դիմում-հայտում իրենց ընտրությամբ եւ ցանկացած հաջորդականությամբ հայտագրում են թափուր տեղեր ունեցող մասնագիտությունները՝ ըստ ուսուցման անվճար եւ վճարովի համակարգերի:

Համաձայն ընդունելության դիմում-հայտի դիմորդը կարող է մասնակցել մեկ կամ մի քանի բուհերի վճարովի մասնագիտությունների թափուր տեղերի մրցույթին՝

- եթե ընտրած մասնագիտության համար պահանջվող ընդունելության մրցութային քննությունից ունի դրական միավոր.
- եթե դրական միավորով քննությունը տվյալ մասնագիտության համար ընդունելության մրցութային քննությունը չէ, բայց ընդգրկված է տվյալ մասնագիտության քննությունների ցանկում:

Առավելությունը տրվում է տվյալ մասնագիտության համար պահանջվող ընդունելության մրցութային քննությանը:

Հանրապետական ընդունող հանձնաժողովը բուհերում լրացուցիչ փուլի մրցույթի արդյունքները հաստատում է հուլիսի 25-ին: //

Սյունիքի մարզում նոր կորոնավիրուսային հիվանդության տարածման ընդհանուր պատկերը

Հարգելի՛ սյունեցիներ

Տեղեկացնում ենք, որ այս մայիսի 16-ի դրությամբ Սյունիքի մարզում առկա է նոր կորոնավիրոսային հիվանդության տարածման հետեւյալ պատկերը.

Ընդհանուր՝ **55** հաստատված դեպք, որից
վերջին 2 օրում՝ **3** դեպք Սիսիանում:
31 հոգի բուժվել է,
24 հոգի բուժում է ստանում, որից՝
Քաջարանից՝ **15** հոգի,
Գորիսից՝ **6** հոգի,
Սիսիանից՝ **3** հոգի:
Սիսիանում արձանագրված դեպքերը վարակի այլ օջախից են:

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

Հուլիսի 1-ից հետո երեխայի ծնվելու դեպքում կառավարությունը կմարի հիփոթեքային վարկի մի մասը

Կառավարությունն ընդունեց երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության 2020-2023թթ. պետական աջակցության նպատակային ծրագրերը: Այդ ծրագրերից մեկով աջակցություն կտրվի 2020 թվականի հուլիսի 1-ից հետո երեխա ունեցած ընտանիքներին, որոնք հիփոթեկային վարկ են մարում:

Երեխայի ծննդյան աջակցության ծրագրի հիմնական պայմաններն են.

- երեխան ծնվել է 2020 թվականի հուլիսի 1-ին կամ դրանից հետո,
- անշարժ գույքի ձեռք բերվող եւ գնահատվող շուկայական առավելագույն գինը՝ 30 մլն. դրամ, որն ավելացվում է շահառուի 3-րդ եւ հաջորդ յուրաքանչյուր երեխայի հաշվով 5 մլն. դրամով,
- շահառուն առնվազն 12 ամիս կատարել է հիփոթեկային վարկի մարումներ եւ վերջին 12 ամիսների ընթացքում մարված հիփոթեկային վարկի գծով ուշացված օրերի ընդհանուր քանակը չի գերազանցում 30 օրացույցային օրը,
- հիփոթեկային վարկի գործողության ընթացքում բնակարանը օտարելու դեպքում պետական աջակցության գումարը ենթակա է վերադարձման պետությանը:
- Երեխայի ծննդյան աջակցության չափը կազմում է երեխայի ծննդյան օրվան հաջորդող ամսվա 1-ի դրությամբ.
- վարկի մնացորդային մայր գումարի 10%-ի, իսկ Երեւան քաղաքում՝ 5%-ի չափով (բայց ոչ ավելի, քան 500 000 դրամը)՝ եթե դա շահառուից սերված 1-ին կամ 2-րդ երեխան է,
- վարկի մնացորդային մայր գումարի 50%-ի, իսկ Երեւան քաղաքում՝ 25%-ի չափով (բայց ոչ ավելի, քան 2 000 000 դրամը)՝ եթե դա շահառուից սերված 3-րդ եւ հաջորդ երեխան է
- վարկի մնացորդային մայր գումարի 15%-ի, իսկ Երեւան քաղաքում՝ 8%-ի չափով (բայց ոչ ավելի, քան 1 500 000 դրամը)՝ եթե դա շահառուից սերված 1-ին կամ 2-րդ երեխան է եւ շահառուի տարիքը չի գերազանցում 25 տարին,
- վարկի մնացորդային մայր գումարի 70%-ի, իսկ Երեւան քաղաքում՝ 35%-ի չափով (բայց ոչ ավելի, քան 4 000 000 դրամը)՝ եթե դա շահառուից սերված 3-րդ եւ հաջորդ երեխան է եւ շահառուի տարիքը չի գերազանցում 25 տարին:

LRAGIR.AM

Հեռավար ուսուցումից դուրս մնացածները բաց թողնվածը կլրացնեն 2020-2021 թթ. ուսումնական տարվա սկզբում

Հայաստանում հեռավար կրթության համակարգից դուրս մնացած աշակերտների համար 2020-2021 թթ. ուսումնական տարում կլինեն պահուստային շաբաթ եւ օրեր՝ բացը լրացնելու համար: Այս մասին Ազատություն ռադիոկայանի «Ֆեյսբուքյան ասուլիս» հաղորդաշարին ասաց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Արայիկ Հարությունյանը:

«Մեր նախնական տեղեկություններով՝ ՀՀ տարբեր մարզերում հեռավար ուսուցմանը մասնակցել է աշակերտների 85-90 տոկոսը: Մենք ակնկալում ենք, որ ամփոփման արդյունքներում կունենանք ավելի բարձր թիվ: 2020-2021 ուսումնական տարում մենք նախատեսել ենք ունենալ պահուստային շաբաթ եւ օրեր, որի ժամանակ այն աշակերտներն, ովքեր ինչ-ինչ պատճառներով դուրս են մնացել հեռավար կրթության համակարգից՝ կլրացնեն բաց թողնվածը»,- նշեց Հարությունյանը: ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը քննարկում է 2020-2021 թթ. ուսումնական տարին 1 շաբաթ շուտ սկսելու հարցը:

ARMLUR.AM

Մեր հայրենակցի նոր գիրքը

Վերջերս ընթերցողին հասավ հասարակական-քաղաքական ուշագրավ մի հրատարակություն՝ մեր հայրենակից (ծնվել է Կապանի շրջանի Փուխրուտ գյուղում, մտավորականի ընտանիքում), պատմական գիտությունների դոկտոր, Երեւանի պետհամալսարանի Հայաստանին հարակից երկրների պատմության ամբիոնի պրոֆեսոր Հենրիկ Մուշեղի Աբրահամյանի «Հայաստանի անկախացման հասարակական-քաղաքական նախադրյալները եւ կայացման սկիզբը» (1956թ. փետրվար-1991թ. սեպտեմբեր) աշխատությունը: Այն տպագրության է երաշխավորել Երեւանի պետհամալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհուրդը: Գիրքը ներառում է չորսուկես տասնամյակ ընդգրկող մի ժամանակաշրջան, մեր ժողովրդի պատմության նշանավոր էջերը՝ այլախոհական շարժում, ընդհատակյա կազմակերպությունների գործունեություն, Հայաստանի անկախության համար մղված պայքար, եւ ընդհանրապես հասարակական-քաղաքական կյանք՝ իր վայրիվերումներով: Արխիվային բազմաթիվ նյութերի, փաստաթղթերի (մի մասը նորահայտ), ուսումնասիրությունների հիման վրա վերլուծվել ու բացահայտվել են այն գործընթացները, որոնք հանգեցրին մեր հանրապետությունում ընդհատակյա կազմակերպությունների եւ այլախոհական շարժման ձեւավորմանը, 1980 թթ գորբաչովյան վերակառուցմամբ ծնված Արցախյան եւ հայ ժողովրդական շարժումների ծավալմանը, ինչպես նաեւ անկախության համար մղվող պայքարի սկզբնավորմանը եւ դրա ընթացքը:

Արխիվային նյութերի մի զգալի մասը՝ բավականին շատ ֆոնդեր, երկար տասնամյակներ պահվում էին գաղտնի թղթապանակներում, որոնց նյութերին ծանոթանալն արգելվում էր հետազոտողների կողմից: Կոմունիստական կուսակցության պատմության վերաբերյալ ուսումնասիրությունները պետք է շարադրվեին միայն դրական փաստերի, նյութերի հիման վրա: Անկախության տարիներին այդ երեւույթը վերացվել է եւ գաղտնազերծվել են շատ պահոցներ՝ հնարավորություն տալով ուսումնասիրողներին այդ նյութերը հրապարակել եւ դնել գիտական շրջանառության մեջ, ինչին էլ ձեռնամուխ է եղել հեղինակը:

Ներածության մեջ Հ. Աբրահամյանն անդրադառնում է խնդրո առարկա ժամանակաշրջանի վերաբերյալ ուսումնասիրություններին, որոնք վերաբերում են հայոց պետականության կայացմանը, Արցախի հարցի լուծմանը միտված ջանքերին, Հայաստանի երրորդ հանրապետության կառուցման բազմաթիվ հիմնախնդիրներին, անցման ժամանակահատվածի դժվարություններին եւ այլն: Հրապարակի վրա եղած այդ ամենն ընդգրկող գրականության, նրանց հեղինակների մասին հակիրճ շարադրված է աշխատության ներածության մեջ:

Գիրքը հետաքրքրական է նաեւ այնքանով, որ նրանում ներկայացված է Խորհրդային Հայաստանում այլախոհական շարժումը եւ 1960-1980 թթ. ոչ ֆորմալ կազմակերպությունների գործունեությունը: Այլախոհական շարժումը Խորհրդային Հայաստանում վերելք ապրեց 1970-ական թթ. սկզբներին եւ շարունակվեց մինչեւ 1980-ականների կեսերը: Դա պայմանավորված էր 1970-ական թթ. սկզբներին ԽՍՀՄ-ում մարդու իրավունքների պաշտպանության նպատակով առաջին իրավապաշտպան կազմակերպությունների ստեղծումով:

Գրքի ուշագրավ հատվածներից է *«Արցախյան շարժման արձագանքները հայկական սփյուռքում»* գլուխը, որտեղ հեղինակը շարադրել է Արցախյան շարժման օրերին հայկական գաղթօջախներում տեղի ունեցած իրադարձությունները, որոնք քիչ հայտնի են ընթերցողին: Իսկ հայկական սփյուռքը շատ զգայուն էր եւ մեծ ուշադրությամբ եւ կարեկցանքով հետեւում էր Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին: Միաժամանակ արտասահմանյան հայկական մամուլում հրապարակված էին հոդվածներ Լեռնային Ղարաբաղի եւ Նախիջեւանի պատմության, վարչական-տարածքային պատկանելության մասին՝ ընդսմին ձեւավորելով հասարակական կարծիք: Սփյուռքում հրատարակվող թերթերում հաղորդվում էր նաեւ Երեւանում անցկացվող հանրաքվեների մասին, որոնցում Լեռնային Ղարաբաղը եւ Նախիջեւանը Հայաստանին միացնելու հարցեր էին բարձրացվում:

Հայկական սփյուռքի ջանքերի շնորհիվ արեւմտյան լրատվամիջոցներն ուշադրության կենտրոնում էին պահում Լեռնային Ղարաբաղի շուրջ տեղի ունեցող իրադարձությունները: Օրինակ, ֆրանսիական «Ֆիգարո» թերթը, իր մեկնաբանություններով ներկայացնելով Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակը, այն անվանում է պայթյունավտանգ, նաեւ նշում, որ իշխանությունների մի փոքր անգամ սխալը կարող է հանգեցնել ծանր հետեւանքների:

Հեղինակը հանգամանորեն անդրադարձել է Հայաստանի Երրորդ հանրապետության պատմության, նրա տարբեր հարցերին ու խնդիրներին նվիրված ուսումնասիրություններին՝ գովեստից, մեծարումից, հերոսացումից մինչեւ տարբեր կարգի քննադատություններ, սխալներ ու թերություններ: Ինչպես գրում է, գլխավորը, որն իշխում էր դրանցում, մեծ ոգեւորությունն է եւ հպարտությունը, որ տվյալ ժամանակաշրջանում համակել էր բոլորին, խնդիրն այն էր, որ հայ ժողովուրդը մուտք էր գործել պատմական մի նոր ժամանակաշրջան, որի գլխավոր նպատակն անկախության համար պայքարն ու նորանկախ Հայաստանի կառուցումն էին: Հավաստի փաստերով ներկայացված է Արցախյան շարժումը՝ սկզբնավորումից սկսած:

Բայց այնպես չէ, որ ամեն ինչ իդեալական գույներով է շարադրված: Աշխատությունում նաեւ ցույց է տրված, որ հանրապետության նոր ղեկավարությունը, տարվելով գլխապտույտ հաջողություններով, թույլ տվեց տարբեր սխալներ, խոսքի եւ գործի միջեւ հակասություններ, որոնց հետեւանքով մարդիկ հայտնվեցին անօգնական, աշխատանքից զուրկ եւ սոցիալապես անապահով վիճակում, ինչն էլ հարուցեց լայն զանգվածների դժգոհությունը, իշխանություններից հիասթափությունը:

Աշխատության մեջ զետեղված են կարեւոր փաստաթղթերի լուսապատճեններ, հեռագրերի ու նամակների տեքստեր, մասնավորապես, ԱՄՆ Կալիֆոռնիայի նահանգապետ Ջորջ Դոքմեջյանի հեռագիրը ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ.Ս.Գորբաչովին եւ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ին, վերջում զետեղված է Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագիրը, որով փաստորեն հիմք դրվեց Հայաստանի՝ Խորհրդային Միությունից դուրս գալու եւ անկախ պետականության հաստատման գործընթացին, որն էլ հիմք հանդիսացավ հետագայում ընդունելու դրանից բխող օրենսդրական նոր որոշումներ, Սահմանադրության մշակման, ընդունման համար նոր պայմաններ եւ այլն:

Գիրքը նաեւ մի հետաքրքրական տարր է պարունակում. հեղինակը կազմել է հարցազրույցի հարցաշար, որ առնչվում է հայոց նորագույն պատմության՝ Երրորդ հանրապետության ավելի քան քառորդդարյա պատմության դասերին, Ղարաբաղյան հակամարտության կարգավորվածության արդի իրավիճակին, արդյունքներին, բացթողումներին, հեռանկարներին, Հայաստանի Հանրապետությունը նախագահական կառավարման համակարգից խորհրդարանական կառավարմանն անցնելուն եւ այլն: Նպատակ կար հարցաշարը ներկայացնել «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին եւ ՀՀՇ-ՀԱԿ ղեկավարներին: Բայց ոչ մեկը չցանկացավ մասնակցել սոցիարցմանը՝ պատճառաբանելով, որ բավականին դժվար է տեղավորվել պայմանավորված էջերի շրջանակում: Եւ հեղինակին այլ բան չէր մնում, քան գրքում զետեղել այդ հարցաշարը՝ այն թողնելով սերունդների եւ պատմության դատին:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Նա մարդու բացառիկ կոչվող տեսակից էր

Գորիս քաղաքը կորցրեց մարդկային խորախորհուրդ որակներով օժտված իր լավագույն անհատականություններից մեկին: Սրտի կաթվածից՝ բավականին վաղաժամ կյանքից հեռացավ, իր զգայուն եւ շրջահայաց ներաշխարհով բազմաթիվ գորիսեցիների ակնածալի հարգանքին ու համակրանքին արժանացած, Արմեն Մխիթարի Մաշուրյանը: Նրա հանկարծահաս մահվան ողբերգական լուրը սրտառուչ ափսոսանքի կսկիծով պարուրեց բազում գորիսեցիների...

Արմեն Մաշուրյանը ծնվել է 1958թ. նոյեմբերի 18-ին՝ Գորիս քաղաքում: 1975թ. ավարտելով Գորիսի թիվ 2 միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղի ֆիզիկայի ֆակուլտետ: Ինստիտուտն ավարտելուց հետո՝ 1979 թվականից աշխատել է Գորիսի ֆիզիկատեխնիկական կենտրոնում՝ հիմնականում զբաղվելով ճկուն պոլիմերների բյուրեղացման պրոցեսների ուսումնասիրությամբ:

1989թ. ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում պաշտպանել է գիտությունների թեկնածուի գիտական թեզ՝ «Ճկուն շղթաներով պոլիմերների բյուրեղացումը ջերմամշակման ժամանակ» թեմայով՝ ստանալով գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Խորհրդային Միության փլուզման նախաշեմին՝ իր խառնվածքին բնորոշ իրատեսությամբ կանխազգալով գիտական կառույցներին սպասվող անհուսալի ապագան՝ Արմեն Մաշուրյանը հիմնեց գիտաարտադրական կոոպերատիվ, իր գիտական ղեկավար պրոֆեսոր Ֆրենկելի պատվին՝ տալով նրան «Ֆրանկ» անվանումը:

«Ֆրանկ» կոոպերատիվը, իր գոյության երեսուն տարիների ընթացքում, Արմեն Մաշուրյանի գերմարդկային ջանքերի շնորհիվ եզակի պահերի պարապուրդի մեջ հայտնվեց: Նա կարողացավ արտադրանք տալ եւ սպառման հնարավորություններ գտնել անգամ 90-ականներ կոչված այն ողբալի ժամանակաշրջանում, երբ մեծ ու փոքր բոլոր գործարանների արտադրական կարողություններն անխնա փոշիացվում էին, երբ քաղաքային բնակչության մի ստվար հատված հանապազօրյա հաց վաստակելու, սովամահ չլինելու համար արտագաղթի ուղին էր բռնել, երբ ժողովրդին սոցիալական թշվառության ճիրաններից փրկելու պետական ռազմավարություն գոյություն չուներ, երբ խոր տնտեսական ճգնաժամից երկիրը դուրս բերելու ճանապարհներ գտնելու փոխարեն, իշխանավոր կոչեցյալները զբաղված էին միայն Խորհրդային Հայաստան պետության «թողած» անբավ ունեցվածքն անպատկառ ցինիկությամբ իրենցը կամ մերձավորներինը դարձնելու նպատակների իրականացմամբ...

Բարոյական արժեհամակարգից զրկված իրականության մեջ, որում թալանի մոլուցքը պետական քաղաքականության մակարդակի էր հասցվել, երեւի թե միայն Արմեն Մաշուրյանի նման երկաթյա ջղեր ունեցող մարդը կկարողանար արտադրամաս աշխատեցնել:

Այդ տարիներին Արմեն Մաշուրյանի արտադրամասից ավելի մեծ հնարավորություններ ունեցող հազարավոր կոոպերատիվներ ու մասնավոր ձեռնարկություններ դադարեցրին իրենց գործունեությունը. շատերը չդիմացան այլ պետություններից բերվող նմանատիպ ապրանքների գնային ու որակական մրցակցությանը, ոմանք էլ չկարողացան համակերպվել Հայաստանում արմատավորված «արտադրական հարաբերությունների» բարոյահոգեբանական մթնոլորտի գաղջության ու արտադրող անհատի արհամարհված վիճակի հետ:

Բայց Արմեն Մաշուրյանը ոչ միայն դիմակայեց բոլոր փորձություններին ու հիասթափություններին, այլեւ սկսեց ավելացնել իր արտադրած կենցաղային ապրանքների տեսականին: Իսկ 1996-1997 թվականներին՝ իր հեղինակած տեխնիկական նախագծերով պատրաստված ինքնաշեն դետալներով հավաքեց եւ շահագործման հանձնեց միջազգային ամենավերին չափորոշիչներին բավարարող, բարձր ամրության պոլիպրոպիլենային թելի արտադրության հոսքագիծ: Գյուղատնտեսության մեջ մշտապես պահանջարկ ունեցող պոլիպրոպիլենային թելի նոր արտադրատեսակը վերջապես կոոպերատիվի համար սկսեց կայուն ֆինանսական մուտքեր ապահովել:

Հարկ ենք համարում նշել, որ ինքնատիպ տեխնոլոգիական լուծումներով բարձր ամրության պոլիմերային թելի արտադրության այդպիսի հոսքագծի երկրորդ օրինակ, մինչեւ վերջերս, գոյություն չուներ աշխարհում:

Եթե Խորհրդային Միությունը չկործանվեր, ապա նա, անտարակույս, գիտական գործունեության ակնառու ճանապարհ էր անցնելու...

Ու չնայած արտադրական գործունեություն ծավալելուց հետո գիտությունը, հանգամանքների բերումով, Արմենի կյանքում ազատ ժամերի սիրելի զբաղմունքի կարգավիճակում էր հայտնվել, այնուամենայնիվ, իր արտադրության մեջ գիտատեխնիկական ճշգրիտ հաշվարկներով ներդրված նրա գյուտարարական աշխատանքը, տարիներ անց, Ռուսաստանի Դաշնության գիտական աշխարհի կողմից պատշաճ գնահատանքի արժանացավ: Պոլիմերների բյուրեղացման գիտական որոշ տեսական բանաձեւումներ իր հեղինակած նախագծերով տեխնիկական հոսքագծի տեսքով արտադրական գործընթացի վերածելու եւ միջազգային ամենաբարձր որակական չափորոշիչներին համապատասխանող արտադրանք տալու համար՝ Մոսկվայի կենտրոնական ինստիտուտի կադրերի պատրաստման ու վերապատրաստման մասնագիտական խորհրդի որոշումով՝ 2016 թվականին Արմեն Մաշուրյանին շնորհվեց տեխնիկական գիտությունների դոկտորի կոչում:

Բնությունն Արմեն Մաշուրյանին օժտել էր անալիտիկ մտածողության կուռ տրամաբանությամբ, գյուտարարի պրպտուն ձիրքով, գիտական աշխարհի նվիրյալի անձնուրաց ջանասիրությամբ՝ շնորհելով նրան նաեւ ցանկացած դժվարություն հաղթահարելու աննկուն կամք...

Սակայն այս ամենի հետ մեկտեղ, բնությունը նրան պարգեւել էր ամենաէականը՝ անկաշառ մարդկային հոգի...

Կարելի է վստահորեն պնդել, որ՝

«Ա՜խ, երանի՝ ո՛վ մարդ կըգա
Ու մարդ կերթա անարատ...» հայտնի երկտողում, հարգամեծար խոնարհումով Թումանյանի արտաբերած «երանի»-ն վերաբերվում էր նաեւ Արմեն Մաշուրյան անզուգական անհատի երկրային գոյությանը...

Ցավակցում ենք Արմեն Մաշուրյանի սիրելի կնոջը, զավակներին, հարազատներին, ընկերներին ու նրա մահը սգացող բոլոր մարդկանց...

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»

ՁՅՈՒՆԻԿԸ

Սոնան ուսանող է Երեւանում, իսկ նրա ընտանիքը, նրա ծնողներն ապրում են Սյունիքի մի գեղեցիկ, փոքրիկ քաղաքում:

Ծննդյան օրը նրա ընկերները մետաքսյա ժապավեններով զարդարված մի տուփ են նվիրում ու ստիպում նրան՝ անմիջապես բացել: Սոնան քանդում է ժապավենները, բացում տուփը, իսկ այնտեղ արկղի անկյունում կծկված է կատվի ձագ, մի բուռ, ճեփ-ճերմակ: Սոնան տասը տարեկան աղջնակի նման թռչկոտում է, ճվճվում, գոռում-գոչում. անծանոթ մեկը կմտածեր, թե արտառոց բան է պատահել: Փորձում է տուփից հանել փիսիկին, իսկ սա չռում է նիհարիկ ոտքերը, ճանկերը դուրս հանում, կառչում ամեն ինչից՝ Սոնայի ձեռքերից, շորերից, ժապավեններից, սեղանի սփռոցից:

Սոնան երազում էր շուն ունենալ, բայց սկզբի համար կատվի ձագն էլ բավական էր, միայն չգիտեր, թե այդ տարօրինակ նվերի համար ինչպես է մայրիկին հայտնելու, ով տանել չէր կարողանում ոչ կատուներին, ոչ էլ շներին, մանավանդ երբ այդ կենդանիներին պահում են ուղղակի տանը:

Մայրիկին նախապատրաստելու գործն իր վրա վերցրեց հայրիկը: Դա այնքան էլ հեշտ գործ չէր: Այդպես էլ նրան չհաջողվեց որոշակի դրական արդյունքի հասնել: Ուղղակի միջանկալ համաձայնության եկան. Սոնան կատվի ձագին բերում է տուն, բայց աշխատում է այնպես անել, որ մայրիկն ու կատուն հնարավորինս հազվադեպ հանդիպեն, եթե, իհարկե, նման բան հնարավոր է: Այլ կերպ ասած՝ պահի իր սենյակում, այնտեղից դուրս չթողնի:

Հունիսի վերջին Սոնան, Ձյունիկին դրած նման դեպքերի համար նախատեսված մի շքեղ վանդակի մեջ, վերադարձավ ծնողների մոտ:

Սոնան տան փոքրն էր, մի քիչ երես տված: Եվ չնայած դրան, առաջին գրկախառնություններից հետո մայրը չկարողացավ իրեն զսպել.

– Այ աղջի, ըստեղ կատու չկա՞ր, որ Երեւանից դրան շալակել-բերել ես:

Այս խոսքերը լսելու հետ Սոնան կատվին հանեց վանդակից, բարձրացրեց, դեմքով հպվեց նրան ու թե.

– Շատ լավիկն է, տես, որ բոլորդ էլ կսիրեք:

– Ռադ արա, – զզվելու նման ասաց մայրը, – կատուն ինչ սիրելու բան է, եւ առանց նրան նայելու գնաց խոհանոց ու այնտեղից ավելացրեց.

– Տես, որ քո սենյակից դուրս չգա, աման-չամանի չկպնի:

Երեկոյան, երբ բոլոր տնեցիները հավաքվեցին, մայրը սկսեց տոնական սեղան պատրաստել: Սոնան Ձյունիկին կերակրելուց ու իր սենյակում փակելուց հետո օգնում էր մորը՝ սեղան դնելու, իսկ ավագ քույրը՝ Սաթենիկն աշխատում էր խոհանոցում:

Տունն աղմուկ էր, ծիծաղ, երբեմն լսվում էր քեռու բամբ ձայնը, հաճախ էլ՝ հեռախոսի զանգի ձայնը:

Վերջապես ամեն ինչ պատրաստ է, եւ տնեցիները, հյուրերը սեղան են նստում:

Մի քանի րոպե հետո նախկինի համեմատ «քար» լռություն է: Բոլորը զբաղված են Սաթենիկի պատրաստածները վայելելու շատ «կարեւոր» գործով: Վերջապես քեռին խախտում է լռությունը, բարի գալուստի խոսքեր ասում: Նորից աղմուկ է, համարյա աղաղակ: Ձնգում են բաժակներն ու... լռություն: Ըմպում են: Այդ կարճ լռության մեջ լսվում է, թե ինչպես է հարեւան սենյակի դուռն իր սուր ճանկերով ճանկռոտում Ձյունիկը: Կարծես վիրավորվել է, որ իրեն մոռացել են, մասնակից չեն անում այդ կարեւոր իրադարձությանը: Բոլորն ակամա իրենց հայացքները հառում են մայրիկին: Քեռին խոսում է.

– Այ քույր, քեզ ի՞նչ պիտի անի: Կենդանի է, էլի: Տներ կան շուն, կոկորդիլոս, տո օձ են պահում:

Մայրը չի ցանկանում փչացնել օրը: Գլխով նշան է անում. ավելի լավ է իր օրը փչանա, քան Սոնայինը, մյուսներինը: Սոնան բարձրանում է սեղանից, բացում իր սենյակի դուռը ու չնայելով, թե ինչ է անում, ուր է գնում կատուն, վերադառնում, նստում իր տեղը:

Նորից լսվում է միայն դանակ-պատառաքաղների չխկչխկոցը, բաժակների զրնգոցը: Ու հանկարծ լսվում է տանտիրուհու ծղրտոցը: Օձից խայթվածի պես վեր է թռչում: Բոլորն իրար են խառնվում: Ի՞նչ է պատահել: Ոչինչ էլ չի պատահել: Ձյունիկը, առանց նկատվելու, անցել է ճաշասենյակ, մտել սեղանի տակ եւ քսան հոգու մեջ մոտեցել տանտիրուհուն ու համարյա փաթաթվել նրա ոտքերին: Երեւի ցանկացել է ասել. «Ես վատը չեմ, ընդունիր ինձ»:

Մայրիկի ճչոցին հաջորդում է սեղանակիցների քրքիջը: Չեն ծիծաղում միայն մայրիկը եւ Սոնան: Մայրիկի սփրթնած դեմքի արտահայտությունը հասկանալի է: Հասկանալի է նաեւ Սոնայի լռությունը: Նա կանխազգում է Ձյունիկի հետագա ճակատագիրը: Ասված խոսք է՝ օձը դաղձից փախչում է, սա էլ գալիս ու նրա բնի առաջ է բուսնում: Սոնան դժվարությամբ մոր ոտքերի մոտ, գորգից կառչած Ձյունիկին պոկում ու նորից փակում է իր սենյակում: Կարծես ամեն ինչ հանդարտվում է: Բայց քիչ հետո ամեն ինչ սկսվում է նորից: Փորձում են ուշադրություն չդարձնել. հնարավոր չէ: Կատվի ճանկռտոցի ձայնն ուղղակի ուղեղ է սղոցում: Դարձյալ հորդորում են տանտիրուհուն, ու Սոնան նորից բացում է իր սենյակի դուռը: Նույն պատմությունը, բայց այս անգամ արդեն առանց մոր ճչոցի: Միայն խեղճացած ասում է.

– Ռադ եղիր, քեզ ի՞նչ եմ արել:

Մի կերպ հեռացնում են կատվին, իսկ նա նորից գալիս, փաթաթվում է տանտիրուհու ոտքերին: Սոնան համարյա լաց է լինում: Որոշում են ու մայրիկի ոտքերը փաթաթում սավանով: Բայց չէ, Ձյունիկը համառ է, գալիս, նստում է նրա ոտքերին ու երեւի խնդրում՝ ընդունիր ինձ: Անօգուտ է...

Այդպես էլ հենց առաջին օրը Ձյունիկը փչացրեց ամեն ինչ: Ընտանեկան տոնը չստացվեց: Հյուրերը կամաց-կամաց գնում են: Քեռին ակամա ստեղծված ծանր մթնոլորտը ցրելու համար փորձում է կատակել:

– Լսիր, Սոնա, որ էդքան գովում ես կատվիդ, ասա տեսնեմ՝ նա ուտելուց առա՞ջ է լվացվում, թե՞ հետո:

Սոնան կատակելու սիրտ չունի, ու երբեք էլ չի ասել, թե իր կատուն խելոք է: Քեռին շարունակում է.

– Լսիր եւ իմացիր: Երբ աստված ստեղծեց երկիրը, մարդուն, կենդանիներին, բոլոր, բոլորի համար ապրելու որոշակի պայմաններ ստեղծեց ու հանձնարարեց հետեւել դրանց: Ու կատվին էլ ասաց, որ որս անի, գլուխը պահի: Ուրեմն այսպես, կատուն իր առաջին որսն է կատարում, մուկ է բռնում եւ պատրաստվում է նախաճաշել: Մուկը հարցնում է կատվին.

– Էդ առանց լվացվելո՞ ես ինձ ուտելու:

Կատուն գնում, լվացվում է, վերադառնում, իսկ մուկը, հասկանալի է, չկա, փախել, փրկվել է: Դա դաս է դառնում կատվի համար: Այդ օրվանից սկսած մինչեւ հիմա բոլոր կատուները լվացվում են միայն ուտելուց հետո:

Քեռու կատակը հաջողություն չունեցավ, լսում էին հենց այնպես, որովհետեւ մայրիկի վիճակը վատացել էր: Առավոտյան էլ նա բողոքել էր բարձր ճնշումից, գլխացավից, բայց առօրյա հոգսերը մոռացության էին տվել դրանք: Եվ հիմա, երբ ամեն ինչ խաղաղվել էր, երբ լարվածությունը թուլացել էր, ցավն իրեն զգացնել տվեց: Ստիպված էին շտապ օգնություն կանչել: Ճնշումը չափելուց հետո բուժքույրը ներերակային ներարկում կատարեց ու նստեց մահճակալի եզրին. սպասում էր դեղերի ազդեցությանը:

Տանտիրուհին նրանց հաշվառված հիվանդներից էր: Ավելի քան տասը տարի տառապում էր այդ հիվանդությամբ: Քիչ անց նորից չափեց ճնշումը եւ պատրաստվեց գնալու.

– Քիչ հետո կքնի, չխանգարեք: Սենյակի դուռն էլ, օդանցքն էլ բաց թողեք:

Շտապ օգնության մեքենան գնաց: Տնեցիներն անտրամադիր, լուռ ու մունջ ամեն մեկը մի բանով սկսեց զբաղվել, բոլորն էլ ուղղված էին նրան, որ օգնեն մայրիկին: Շարժվում էին ոտքերի մատների վրա, մեկ-մեկ էլ նայում ննջասենյակի դռնից՝ մայրիկը քնե՞ց, թե՞ չէ:

Այդպիսի մի այցի ժամանակ՝ ննջասենյակի դռան մոտից, Սաթենիկը ձեռքով Սոնային մոտ կանչեց: Այ քեզ բան, սա ի՞նչ պատիժ է: Ձյունիկը միայն իրեն հայտնի ճանապարհներով անցել էր ննջասենյակ ու փառավորապես տեղավորվել մայրիկի վերմակի վրա՝ ուղիղ ոտքերի ուղղությամբ: Սոնայի արյունը սառեց երակներում: «Աստված իմ, ինչպես վերցնեմ սրան, որ մայրիկը չզգա, հաստատ վախից կմեռնի: Իսկ եթե չվերցնեմ ու ինքը զարթնի ու տեսնի՞... Այդ դեպքում հաստատ նոր նոպան անխուսափելի է»:

Ճար չկա, հարկավոր է ինչ-որ ձեւով հեռացնել:

Ոտքերի մատների վրա մոտեցավ, ձեռքերը մեկնեց, որ վերցնի կատվին, հանկարծ մայրը բացեց աչքերը.

– Քնած չեմ, ձեռք չտաս, վաղուց գիտեմ, թող մնա, ես ինձ լավ եմ զգում... պառկա տվեց ու ավելացրեց, – լավ եմ զգում դրա ներկայությամբ:

Հիվանդի ձայնի հետ Ձյունիկն աչքերը բացեց, նայեց իր Սոնա տիրուհուն ու նորից փակեց: Երեւի ուզում էր ասել՝ տեսնու՞մ ես:

Սոնան մտածում էր, որ մայրիկն իրեն չնեղացնելու համար է դա անում, նորից ձեռքերը մեկնեց, բայց մոր, հիվանդին ոչ հատուկ եւ շատ կտրուկ ձեռքի շարժումով նրան արգելեց այդ բանն անել: Սոնան նահանջեց եւ դուրս եկավ ննջասենյակից: Ձյունիկը հիվանդի ոտքերի վրա մնաց մինչեւ լուսաբաց եւ միայն ժամը հինգի մոտ վերադարձավ իր տիրուհու սենյակ, ամբողջ մարմնով փռվեց նրա մահճակալին ու խռմփացնելու նման քուն մտավ: Կարծես ամբողջ գիշեր այլ բանով էր զբաղվել:

Առավոտյան հիվանդի վիճակը զգալիորեն բարելավվել էր: Քույր Աիդան նրան տեսության էր եկել: Ինքն էլ տառապում էր նույն հիվանդությամբ: Տարիներ առաջ նախաձեռնել էր քրոջ հիվանդության ախտորոշման գործը Մոսկվայում: Լավագույն հիվանդանոցներում մոտ մեկ ամիս տեւած հետազոտություններից հետո եկել էին եզրակայության, որ այս դեպքում գործ ունեն ժառանգական երեւույթի հետ: Այնպես որ անհրաժեշտ էր մշտապես գտնվել բժշկական հսկողության տակ: Հիմա էլ տեսության գալով քրոջը՝ ինքն էր վատ զգում, բողոքում գլխացավից: Տանը տոնոմետր կար: Չափում են ճնշումը: Քրոջ վիճակում չէ, բայց դարձյալ բարձր է, զարկերակային ճնշումը 180 է:

Աղջիկները թեյի, սուրճի սեղան են դրել ու վայելում են երեկվա տորթի մնացորդը: Մայրիկի վիճակի քիչ բարելավումը որոշակի ջերմություն է հաղորդել տնեցիներին: Զրուցում են, թե սուրճը, թեյն ինչպես են ազդում արյան ճնշման իջեցմանը կամ բարձրացմանը:

Մինչ այս, մինչ այն, Ձյունիկն արդեն տան հավասար անդամի իրավունքով շրջում է սենյակից-սենյակ եւ գալիս տեղավորվում տանտիրուհու քրոջ՝ Աիդայի ոտքերի մոտ: Նա իր քրոջ նման վեր չի թռչում, կենդանիներ սիրում է, ձեռքն իջեցնում, շոյում է կատվին:

Մոտ մեկ ժամ նստելուց հետո Աիդա քույրը պատրաստվում է գնալ: Ոտքի է կանգնում: Այ քեզ բան, Ձյունիկը ձեռք չի քաշում, կանգնած տեղում ուղղակի շուլալվել է նրա ոտքերին: Աիդան նորից շոյում է նրան ու բարձրացնում.

– Ինչ լավ է, երբ գլուխդ չի ցավում:

Սաթենիկը նորից է չափում նրա ճնշումը: Զարկերակային ճնշումն իջել, հասել է 140-ի: Գլխացավն անցել է:

– Ասում էի, չէ՞, որ լավ սուրճն իջեցնում է ճնշումը:

* * *

Նման անարդար վերաբերմունքը Ձյունիկի նկատմամբ կարող էր երկար շարունակվել, եթե այդ դեպքերից յոթ-ութ օր անց Սաթենիկը հեռուստացույց դիտելուց կարեւոր հայտնագործություն չկատարեր: Հաղորդումը կենդանիների, մասնավորապես շների ու կատուների կողմից մարդկանց վրա թողած դրական ազդեցության մասին էր: Սկզբում պատմում էր, թե ինչպես են շները հաստատում լաբորատոր միջոցներով ախտորոշված քաղցկեղի առկայությունը կամ հենց իրենք մարդկանց հուշում՝ նրանց մոտ այդ հիվանդության առաջացման մասին:

Էկրանին մի կին է իր փոքրիկ շնիկով: Պատմում է, որ իր ոտքին փոքր, ոսպի չափսերով այտուցված կարմիր երանգով բշտիկ է հայտնվում: Մի քանի օր, օրական 3-4 անգամ, տաս-տասնհինգ րոպե շարունակ շնիկը լիզում է այտուցված տեղը: Հենց փորձում են հեռացնել՝ տունը լցնում է հաչոցով: Լիզում է այնքան, ինչքան անհրաժեշտ է համարում, հետո հեռանում: Հարազատ-մտերիմների խորհրդով կինը դիմում է բժիշկի: Նրա մոտ հայտնաբերում են ուռուցք, զարգացման նախնական փուլում եւ հաջող վիրահատությամբ փրկում նրան: Հաղորդման երկրորդ բաժինը պատմում էր կատուների ունակությունների մասին: Սաթենիկը հասցնում է մորը հեռուստացույցի մոտ հրավիրել:

Պարզվում է, որ կատուները զգում են հիպերտոնիայով հիվանդներին ու սկսում են նրանց հետ շփվել՝ դրանով օգնում կարգավորելու արյան ճնշումը:

Այդ հեռուստահաղորդումը ճակատագրական եղավ Ձյունիկի համար:

Նա բոլորի ուշադրության կենտրոնում էր, հատկապես տանտիրուհու: Կատուն նոր արտոնյալ կարգավիճակ էր ձեռք բերել: Տանտիրուհին բարձրաձայն վեր էր լուծում անցած մի քանի օրերի իր ֆիզիկական, առողջական վիճակը եւ բոլոր դրական փոփոխությունները կապում միայն ու միայն տանը Ձյունիկի ներկայությամբ:

Շուտով Ձյունիկի համբավը տարածվեց հարեւանների շրջանում, ամբողջ թաղում: Բանը հասավ նրան, որ խնդրատուներ էին գալիս՝ մեկ-երկու օրով նրան իրենց տուն տանելու՝ բամբակի, «եղ ու մեղրի» մեջ պահելու պատրաստակամությամբ եւ խոստումներով:

Մի օր էլ տեղական հեռուստատեսությունից եկան մի կին ու երկու տղամարդ, թե բա՝ եկել ենք ձեր Ձյունիկին նկարահանելու, որ ամբողջ շրջանը, ամբողջ հանրապետությունն իմանա նրա մասին, նրա շնորհիվ էլ՝ նաեւ ձեր մասին:

Սկզբից խոսեց Սոնայի մայրիկը: Պատմեց, թե ինչպես իրենց տանը Ձյունիկի հայտնվելուց հետո ինքը սուր գլխացավեր չի ունեցել: Ձյունիկը, միայն իրեն հայտնի ձեւով նախապես զգում է նրա զարկերակային ճնշման բարձրանալը, մոտենում, հպվում է իր մարմնով, ավելի շատ ոտքերին եւ նորից միայն իրեն հայտնի ձեւով իջեցնում կամ կանխում ճնշման հետագա բարձրանալը: Հաճախ է պատահել, երբ գիշերը զարթնել է քնից եւ նկատել, որ Ձյունիկը պառկած է իր տեղաշորի վրա, ոտքերի ուղղությամբ: Մայրը միայն չասաց, որ տանն ամենաքիչը ինքն է սիրել Ձյունիկին: Ասենք՝ ինչ սիրելու մասին է խոսքը, ուղղակի մի կերպ է տարել նրա ներկայությունը, այն էլ՝ Սոնայի խաթեր: Այդպես շարունակվել է մինչեւ կատվի շնորհի հայտնի դառնալը:

Հետո խոսեց բժիշկը, որի ասածը տնեցիներին այնքան էլ դուր չեկավ:

– Ձյունիկի շնորհը եզակի չէ, – այս խոսքի հետ նա ձեռքը տանում էր կատվի մեջքով, շոյում նրան, կարծես ներողություն էր խնդրում ասածի համար:

Գիտությանը վաղուց է հայտնի, որ որոշ կենդանիներ հանում են մարդկանց սթրեսը, օգնում ախտորոշելու առանձին հիվանդություններ կամ էլ հաստատել ախտորոշվածը: Կատուներն ու շներն այդ կենդանիների մեջ առաջնային դերակարատում ունեն: Ձյունիկի դեպքը դրա հաստատումն է:

Այս խոսքերին զուգահեռ օպերատորը նկարահանող ապարատը համարյա կպցրեց կատվի բեղիկների. երեւի մեծ պլան էր վերցնում: Բժիշկը շարունակեց:

– Շատ վաղուց կենդանիների այդ ընդունակությունը կամ շնորհն օգտագործում են բժշկության մեջ: ԱՄՆ-ում երկար տարիներ է, ինչ գործում են հատուկ առողջարաններ, հիպերտոնիայով տառապողների, սթրեսի մեջ գտնվողների համար, որտեղ յուրաքանչյուր բուժվող հիվանդի հաշվով պահում են երկու կատու:

Բժիշկն էլի ինչ-որ բաներ ասաց: Հետո հավաքելով լուսարձակները, դրանք սնուցող մալուխները, մի քանի հարց էլ տվեցին տանտիրուհուն ու գնացին:

* * *

Օգոստոսի վերջերին Սոնան վերադառնավ դասերի՝ ծնողների մոտ թողելով «բժիշկ» Ձյունիկին՝ շրջապատված ուշադրությամբ ու հոգատարությամբ: Նա նաեւ մեր քաղաքի՝ իր ցեղակիցների համար էր ապահովել նման ապահով ու հարմարավետ կյանք: Ձյունիկի գործած «հրաշքի» մասին հեռուստահաղորդումից հետո մեր քաղաքի շատ տներում արդեն կատու են պահում:

ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կար այդպիսի մի կոլեկտիվ՝ պատերազմի վետերանների երգչախումբ

1980-ականներին Կապանում տեղի ունեցող մշակութային միջոցառումներից անպակաս էին պատերազմի վետերանների երգչախմբի ելույթները: 1982-ի ապրիլին գաղափար հղացավ նման երգչախումբ ստեղծել, որի ղեկավար դարձավ Ալիկ Բալայանը: Նախկին ճակատայինները հնչեցնում էին պատերազմական տարիների հավերժ կենդանի «Սրբազան պատերազմ», «Կատյուշա», «Սմուգլյանկա» եւ այլ երգեր: Երբեմն դահլիճը այդ երգերը հոտնկայս էր լսում: Երգչախմբին այսպիսի տողեր են ձոնել.

Երբ ամեն անգամ դուք բեմ եք ելնում
Առույգ քայլերով խրոխտ ու վսեմ,
Քարանում է լուռ դահլիճը ասես,
Մարտական տեսքից կախարդվում մեկեն:
Ալեհեր, հպարտ,երբ բեմ եք ելնում,
Համրանում է լուռ դահլիճն ասես:

Երգչախումբը հանդես էր գալիս զորամասերում, հիմնարկ-ձեռնարկություններում, մշակույթի պալատներում: Հետո ընդլայնվեց աշխարհագրությունը: 1984-ին հանդես եկավ Երեւանում՝ հանրապետության երգչախմբային ընկերությունում, 1987-ին Երեւանի օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնի բեմահարթակում:

Այժմ չկան երգչախմբի անդամները, բայց մարզկենտրոնի միջին եւ ավագ սերնդի հուշերում դեռ անմար են Մեծ հայրենականի քառուղիներով անցած վետերանների խրոխտ երգերի հնչյունները, նրանց անկեղծ կատարումները:

Լույս իջնի ձեր շիրիմներին, երգի նվիրյալ զինվորներ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Մանկապարտեզներում կգործեն 10-12 հոգանոց խմբեր, երեխաներին ուղեկցողները շենք չեն մտնի. պարետի որոշումը

Սկիզբը՝ էջ 5

կանացվում է հերթայնության կառավարմամբ (օրինակ՝ կարող են սահմանվել երեխաների՝ նախակրթարան գալու եւ գնալու ժամային միջակայքեր)՝ պահպանելով մարդկանց միջեւ 1.5-2 մետր սոցիալական հեռավորություն:

4) Անհրաժեշտ է նախակրթական հաստատությունում երեխաների խնամքի եւ կրթության գործընթացը կազմակերպել բեռնաթափված խմբերով՝ դրանք դարձնելով 10-12 հոգանոց եւ ապահովելով խաղալու, պարապմունքների, սննդի եւ քնի ժամանակ երեխաների միջեւ 1.5-2 մետր սոցիալական հեռավորություն:

5) Անհրաժեշտ է ժամանակավորապես սահմանափակել նախադպրոցական կրթական հաստատություն հաճախելիությունը՝ առաջնահերթություն տալով այն երեխաներին, որոնց տնային խնամքը գործնականում հնարավոր չէ ապահովել ծնողների կամ խնամակալների աշխատանքը հեռավար ձեւով կազմակերպելու անհնարինությամբ եւ/կամ այլ օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված: Անհրաժեշտ է նախապես ցուցակագրել այն երեխաներին, որոնց ծնողները կամ խնամակալները երեխաներին նախակրթական հաստատություն ուղարկելու մտադրություն են հայտնել:

6) Եթե երեխայի ծնողների (խնամակալների) շրջանում նախկինում հաստատվել է Կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19), կամ նրանք շփում են ունեցել նշված հիվանդությամբ հաստատված դեպքերի հետ եւ գտնվել են մեկուսացման եւ/կամ ինքնամեկուսացման մեջ, ապա առաջին անգամ ներկայանալիս այդ երեխաների ծնողների (խնամակալների) կողմից ներկայացվում է կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) լաբորատոր ախտորոշման «բացասական արդյունքը» փաստող տեղեկանք (տեղեկանքի վաղեմությունը չպետք է գերազանցի 7 օրը):

7) Պետք է ժամանակավորապես ձեռնպահ մնալ նախադպրոցական կրթական հաստատությունում լրացուցիչ ընդունելություն կազմակերպելուց՝ ելնելով 4-րդ եւ 5-րդ կետերով սահմանված կանոնները պահպանելու տրամաբանությունից:

8) Բացառվում է մարդկային կուտակում ենթադրող միջոցառումների, այդ թվում՝ անցանց հավաքների ու ժողովների անցկացումը:

2. Տարածքի ախտահանումը

1) Նախադպրոցական կրթական հաստատությունները վերաբացելուց 1 օր առաջ եւ յուրաքանչյուր աշխատանքային օրվա ավարտից հետո իրականացվում են ընդհանուր մաքրման եւ ախտահանման աշխատանքներ հաստատության ամբողջ տարածքում, ներառյալ, այդպիսին լինելու դեպքում, բակային տարածքի խաղահրապարակը եւ գույքը՝ կիրառելով 60-80% սպիրտ պարունակող ախտահանիչ նյութեր: Ննջասենյակներում կամ քնելու համար առանձնացված տարածքներում ախտահանումն իրականացվում է քնելուց առաջ, խաղասենյակներում կամ խմբասենյակներում՝ քնի ժամի ընթացքում: Ճաշելուց հետո տարածքը ախտահանվում է, այդ թվում՝ սեղանները, բռնակները, ծորակները եւ այն ամենն, ինչին երեխաները կարող են ձեռք տալ:

2) Նախադպրոցական կրթական հաստատություններում իրականացվում է տարածքների (խմբասենյակ, ճաշասենյակ, ննջասենյակ, սանհանգույց եւ այլն) օդափոխում 2 ժամը մեկ:

3) Մուտքի մոտ ապահովվում է 60-80% սպիրտ պարունակող ախտահանիչ նյութերով տարաների առկայություն՝ յուրաքանչյուր մտնող անձի ձեռքերի պարտադիր ախտահանման համար:

4) Հաստատության մուտքի մոտ, սանհանգույցներում եւ հաստատության տարածքում տեղադրվում են փակվող աղբամաններ՝ օգտագործված դիմակները եւ անհատական պաշտպանության այլ պարագաները նետելու համար:

5) Ժամանակավորապես առօրյա գործածությունից դուրս են բերվում այն խաղալիքները եւ այնպիսի իրերը, որոնց ամենօրյա ախտահանում հնարավոր չէ իրականացնել: Խաղալիքները հավաքվում են առանձին տարաներում, եւ նախքան հետագա օգտագործումը դրանք պարտադիր ախտահանվում են:

3. Աշխատողների համար կանոններ

1) Իրականացվում է աշխատողների ջերմաչափում հեռավար կամ անհատական օգտագործման ջերմաչափով օրական առնվազն 2 անգամ, որոնցից մեկը՝ աշխատանքի ներկայանալիս՝ նախքան կրթական հաստատություն մուտք գործելը: Ջերմություն ունենալու դեպքում աշխատողներին չի թույլատրվում մուտք գործել հաստատություն՝ այդ մասին անհապաղ տեղեկացնելով ՀՀ առողջապահության նախարարության թեժ գիծ՝ զանգահարելով 8003 համարով:

2) Նախակրթարանի ողջ անձնակազմն աշխատանքային եւ ընդմիջման ժամերին ապահովվում է անհատական պաշտպանության միջոցներով (ձեռնոցներ եւ դիմակներ)՝ դրանք 3-4 ժամը մեկ փոխելու հնարավորությամբ:

4. Երեխաների խնամքը

1) Իրականացվում է երեխաների ջերմաչափում եւ զննում հեռավար կամ անհատական օգտագործման (ծնողի կողմից բերված) ջերմաչափով օրական առնվազն 2 անգամ, որոնցից մեկը՝ նախքան կրթական հաստատություն մուտք գործելը: Ջերմող երեխաներին չի թույլատրվում մուտք գործել հաստատություն, եւ այդ մասին անմիջապես տեղեկացվում է ՀՀ առողջապահության նախարարության թեժ գծին՝ զանգահարելով 8003 համարով:

2) Ժամանակավորապես չեղարկվում կամ հետաձգվում են նախադպրոցական կրթության ծրագրերի շրջանակներում նախատեսված խմբային միջոցառումները (օրինակ՝ հանդեսներ, տոնական միջոցառումներ, ծննդյան տարեդարձներ եւ այլն):

3) Երեխաներն ապահովվում են ձեռքերի լվացման հնարավորություններով՝ հոսող տաք եւ սառը ջրով, արմնկային կամ ոտնակային կառավարման ծորակներով (անհնարինության դեպքում՝ անմիջապես ախտահանման հնարավորությամբ), օճառով: Սանհանգույց երեխաները հաճախում են մեկական: Ապահովվում է ձեռքերի հաճախակի լվացում:

4) Խմբերի վարման շարունակական գործընթացն իրականացվում է նույն խմբասենյակում կամ դասասենյակում: Միաժամանակ, ապահովվում է, որպեսզի յուրաքանչյուր երեխա շարունակաբար քնի նույն անկողնում: Անկողնային սպիտակեղենն ամեն օր պարտադիր լվացվում եւ փոխվում է:

5) Խաղերի եւ պարապունքների ժամանակ պետք է նվազագույնի հասցնել երեխաների միջեւ սերտ շփումները:

6) Ավագ խմբերում իրականացվում են բացատրական դասընթացներ՝ կորոնավիրուսի կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

5. Սննդի կազմակերպումը

1) Հնարավորության դեպքում երեխաները բերում են սնունդը տնից՝ առանձնացված տարաների մեջ:

2) Նպատակահարմար է մեկանգամյա օգտագործման սպասքի կիրառումը: Բազմակի օգտագործման սպասքի կիրառումը հնարավոր է բացառապես պարտադիր ախտահանման պայմանով:

3) Միաժամանակ օգտագործվող սպասքի եւ պարագաների քանակը պետք է բավարարի երեխաների սննդի կազմակերպման ողջ պահանջարկը: Չի թույլատրվում օգտագործել ճաքերով, վնասված եզրերով, դեֆորմացված, վնասված էմալով սպասք:

4) Ժամանակակից սպասք լվացող մեքենաների առկայության պարագայում սպասքի մեքենայացված լվացումն իրականացվում է դրանց շահագործման հրահանգին համապատասխան՝ կիրառելով սպասքի եւ սեղանի պարագաների ախտահանում ապահովող մշակման ռեժիմներ 65՛C–ից ոչ ցածր ջերմաստիճանում 90 րոպե տեւողությամբ:

5) Սպասքի՝ ձեռքով լվացման համար նախատեսվում են առանձին ավազաններ: Սպասքի լվացումը ձեռքով իրականացվում է հետեւյալ կարգով. սննդի մնացորդների մեխանիկական հեռացում, լվացում՝ ավազանի բաժիններից մեկի ջրի մեջ լվացող միջոցների ավելացմամբ, լվացում ավազանի երկրորդ բաժնում 40 ՛C–ից ոչ ցածր ջերմաստիճանի ջրում եւ երկու անգամ քիչ քանակությամբ լվացող միջոցների ավելացմամբ, քան ավազանի առաջին բաժնում, սպասքի պարզաջրում բռնակներով մետաղյա ցանցում ավազանի երրորդ բաժնի մեջ 65՛C–ից ոչ ցածր ջերմաստիճանի տաք հոսող ջրով լվացում, ցնցուղի ծայրադիրով ճկուն ռետինե խողովակի օգնությամբ, ամբողջ ճաշի սպասքի եւ պարագաների մշակում ախտահանիչ միջոցներով՝ դրանց կիրառման հրահանգին համապատասխան, սպասքի պարզաջրում բռնակներով մետաղյա ցանցի մեջ ավազանի երրորդ բաժնում հոսող ջրով, ցնցուղի ծայրադիրով ճկուն ռետինե խողովակի օգնությամբ, սպասքի չորացում ցանցե դարակների, դարակաշարերի վրա:

6) Մեկանգամյա սպասքի կիրառման ժամանակ իրականացվում է օգտագործված սպասքի հավաքում մեկանգամյա, սերտ փակվող պլաստիկից փաթեթների մեջ, որոնք տեղափոխվում են աղբավայր»:

//

ԿՈՐԵԼ Է // Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի 05.06.2004թ. շրջանավարտ Արմինե Հարությունի Հովսեփյանի AD N 025815 դիպլոմը, գրանցման N 1190: Համարել անվավեր:

Սյունյաց Երկիր
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: Ⓡ նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1030, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 20.05.2020թ.: